



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

21061

Мурзых Кузнецов  
серебро



15 JAN 2010

33  
7-48

75 FEB 2007

ՀՐԱՄԱՆԱԼԻԹՈՒԹԻՒՆ „ԶԱՆԳԱԿ“-ի.

Ս. ԴԻԿԾՈՅԵՑՆ.

# ՄԱՐԴԻԿ ԻՆՉՈՎ ԵՆ ԱՊՐՈՒՄ.

Թարգմ. Խ. Սոլոմոնեան.



Բուռով Դօնի վրայ.  
ամն «Դոնսկայա թէշ»

Ростовъ на Дону.  
Типографія „Донская Рѣчъ“

1906

103 APR 2013

21.06.1

## ՄԱՐԴԻԿ ԻՆՉՈՎ ԵՆ ԱՊՐՈՒՄ.

Ա.


«Ամեն մի մարդ իւր աշխատանքով է ապրում»:  
Արդեօք սա ճշմարիտ է:

Առաջին պահ իսկապէս ճշմարիտ է թւում: Փոքրիկ հայեացք ձգեցէք միայն այն ամենի վրայ, ինչ որ գրւել ու խօսւել է դրա մասին լրագրներում, գրքերում և մինչև անդամ եկեղեցու բեմից արտասանւած քարոզներում: Այսպիսով ուրեմն՝ միթէ շատերին չի թւայ, թէ կօշկակարը, գերձակը, վարժապետը, իսկապէս որ իրանց սեփական աշխատանքով են ապրում, և թէ գործարանատէրն էլ նոյնպէս աշխատում է, եթէ ոչ ձեռներով, գոնէ գլխով:

Ճիշտ է արդեօք սա: Արդեօք իւրաքանչիւր մարդ իւր աշխատանքով է ապրում:

Գուցէ դուք զարմանաք, եթէ ասեմ, թէ ոչ ոք իւր սեփական աշխատանքով չի ապրում,—ոչ միայն գործարանատէրերը ու վաճառականները, այլ և բուլոր բանւորները:

Եթէ, օրինակ՝ կօշկակարը ոչ թէ միայն կօշիկ կարէր, այլ մի կտոր հող էլ ունենար, ցորեն կամ բանջար ցանէր, եթէ նա ինքը թել մանէր, իւր համար շորեր կարէր, եթէ նա—մի խօսքով—ինքը իւր տանը պատրաստէր անհրաժեշտ իրեր, այն ժամանակ մենք



կարող էինք ասել, որ նա իսկապէս ապրում է իւր աշխատանքով։

Եւ ճիշտ որ՝ առաջւայ ժամանակները, սրանից մի քանի հարիւր տարի առաջ, երբ իւրաքանչիւր քաշաք իւր համար բաւական հող ունէր, և ամեն մի արհեստաւոր, որպէս քաղաքի բնակիչ, այդ հողից օգտւելու իրաւոնք ունէր՝ այն ժամանակ արհեստաւորները ամեն մի անհրաժեշտ իրեղէն իրանք տանն էին պատրաստում, այն էլ իրանց մի կտոր հողի վրայ, և ապրում էին իրանց սեփական աշխատանքով։

Բայց այժմ, ինչպէս յայտնի է, այդ այդպէս չէ։ Այժմ արհեստաւորը իւր սեփական հողը չունի, և կօշկակարը, օրինակ՝ միայն կարող է կօշիկ կարել և ուրիշ ոչինչ։ Իսկ կօշիկը իհարկէ չի կարելի ուտել, կօշիկով չի կարելի ամբողջ մարմինը ծածկել։ Միւնոյնը կարելի է ասել և դերձակի, հիւտնի, որմասդրի և այլն մասին։ Դերձակը իւր կարած վարսիքները ոչ ուտել կարող է և ոչ լսել. նոյնպէս և քարտաշը չի կարող ուտել իւր քարերը։

Այսօր միայն գիւղացին իրաւոնք ունի ասելու, որ ինքը իւր սեփական աշխատանքով է ապրում։ Դիւղացին ինքն իւր տանն է պատրաստում հաց, կաթ և երբեմն իսկ շորեր, թէպէտ վերջին ժամանակները աւելի սակաւ, որովհետեւ շորեղէնը քաղաքում թէ աւելի էժան է և թէ գեղեցիկ կարւած։

Կան երկրներ, որտեղ գիւղացիք իրանց համար պէտքական իրերը իրանք չեն պատրաստում, այլ փողով են վերցնում։ Նրանցից մի քանիսը միայն գինի են քամում, միւտները միայն վուշ են ցանում և մի քանիսը միայն բանջարեղէն տնկում և այլն. իսկ անհրաժեշտ իրերը, որ իրանք չեն պատրաստում, ինչ-

պէս՝ ուտելեղէնը և շորեղէնը, փողով են վերցնում։ Ուրեմն, ինչպէս աեսնում էք, ոչ ոք, համարեան ոչ ոք չի կարող ասել, որ ինքը ապրում է իւր սեփական աշխատանքով։ Կօշկակարը ապրում է դերձակի աշխատանքով, որմնադիրը—հիւտնի ու դիւղացու, դերձակը ապրում է կօշկակարի, հիւտնի, որմնադրի և այլն աշխատանքով։ Բոլոր մարդիկ ապրում են ոչ թէ իրանց սեփական, այլ ուրիշների աշխատանքով։

— Բայց չէ որ նրանցից ամեն մէկը աշխատում է, կպատասխանէք դուք, նրանցից ամեն մէկը ոչինչ չէր ունենար, եթէ չաշխատէր։

Ճշմարիտ է, դրա համար էլ հէնց մենք չենք ասում, թէ բոլոր մարդիկ «ապրում են իրանց աշխատանքով», այլ ասում ենք, թէ նրանք իրանց «պահում են իրանց աշխատանքով»։

— Միթէ միւնոյնը չէ ապրել սեփական աշխատանքով և պահել ինքն իրան իւր աշխատանքով։

Ո՛չ, միւնոյնը չէ. և ահա թէ ինչու։ Եթէ կօշկակարը, դերձակը, հողադործը և առհասարակ բոլոր մարդիկ իսկապէս ապրէին իրանց աշխատանքով, եթէ նրանք առաջւայ տարիների նման ամեն մի անհրաժեշտ իր պատրաստէին տանը, այն ժամանակ միայն նրանցից ամեն մէկը հաւատացած կլինէր, որ թէ և նրա գրութիւնը միշտ միւնոյնը չի լինի, բայց և այնպէս ինքը քաղցից չի մեռնի և մի կերպ «եօլակգնայ»։

Իսկ այժմ կօշկակարը միայն կօշիկ է կարում. նա պատրաստում է այնքան, որքան կարուղանում է այն ծախել, ինչպէս ամեն մի ուրիշ ապրանք։ Եթէ առնող գտնուի՝ լաւ է. կօշկակարը կօշիկները կծախէ

և ստացած փողով անհրաժեշտ իրեր կդնէ: Բայց  
եթէ չկարողանայ ծախել, այն ժամանակ նա ինչ պի-  
տի անէ: Կարող կլինի արդեօք նա կօշիկներով կե-  
րակրել իւր երեխաներին. կարմղ է արդեօք նա կօ-  
շիկներով վճարել հարկերը, հարստահարչին կամ պար-  
տատիրոջ պարտքերը հասուցանել և այլն:

Հիմա գութ տեսնում էք, որ ապրել իւր աշխա-  
տանքով և պահել ինքն իրան իւր աշխատանքով, մի-  
ևնոյնը չէ:

Քանի որ մարդիկ պէտքական իրերը պատրաս-  
տում էին առնը, քանի որ նրանք քիչ էին ծախում  
իւր ապրանքից, մինչեւ այդ կարելի էր ասել, որ  
նրանք ապրում էին իրանց աշխատանքով: Բայց հէնց  
այն ժամանակից, երբ մարդիկ ծախելու համար սկսե-  
ցին պատրաստել կօշիկներ, շորեր և այլն, նրանք  
սկսեցին ծախելու համար աւելի շատ աշխատել, քան  
տանը իրանց համար: Եւ ահա վարշաւայի կօշիկարը  
կօշիկներ է կարում արհեստաւորի համար, ուու ջուլ-  
հակը սկսեց աշխատել վարշաւայի կօշէակարի համար.  
ամերիկացի գաղթականը հացի պաշար է հաւաքում  
անդիհացի բանւորի համար, իսկ Անգլիայի բանւոր-  
ները սկսեցին երկաթեայ ու պողպատեայ իրեր մա-  
տակարարել վարշաւայի արհեստաւորներին: Հետեւա-  
բար, հէնց այն օրից, երբ արդիւնագործութիւնը  
արտահանութեան համար հաստատ հիմքերի վրայ  
դրւեց, ոչ ոք իւր համար չի աշխատում, ոչ ոք իւր  
սեփական աշխատանքով չի ապրում, այլ նա ապրում  
է օտարի, ուրիշների աշխատանքով:

Բ.

Եատ բարի: Ուրեմն նշանակում է, ոչ ոք չի ապ-  
րում իւր աշխատանքով, այլ բոլոր մարդիկ իրանց

պահում են սեփական աշխատանքով. և սա պէտք է  
լինի գուտ ճշմարտութիւն:

Բայց սա էլ ամբողջապէս ճշմարիտ չէ. որա վրայ  
էլ կարելի կլինէր շատ բան աւելացնել: Բայց առ  
այժմ ընդունենք, որ ճշմարիտ է. ընդունենք, որ ամեն  
ոք պահում է իրան իւր աշխատանքով:

Բայց ինչու անպատճառ աշխատանքով: Որովհե-  
տեւ, երբ մի մարդ ծախում է իւր շինած իրեղէնը,  
լինի դա կօշիկ կամ շորեր, ամանեղէն կամ դանակ,  
նրա ապրանքը գնահատում է այն աշխատանքով, որ  
դործ է դրւել այդ ապրանքի արտադրութեան հա-  
մար: Պարզենք այս բանը աւելի մանրամասն կերպով:  
Դիցուք, կօշկակարը մի ամբողջ օր իւր կօշիկների  
վրայ աշխատեց և դրա փոխարէն ստացաւ 10 արշին  
կտաւ: Այս ենթադրութեան մէջ ոչինչ տարօրինակ  
բան չկայ՝ աշխատել է և դրա փոխարէն կտաւ է  
ստացել: Բայց երեւակայեցէք ձեզ մի բոպէ, որ աշ-  
խարհիս երեսին կայ մի այնպիսի երջանիկ երկիր,  
որտեղ կօշիկները երկնքից են թափւում: Իհարկէ,  
այդպիսի երկիր գոյութիւն չունի: Բայց եթէ նա  
դոյութիւն ունենար, ինչպէս էք կարծում, կօշկակա-  
րին իրա կօշիկների համար շմատ փող կտային:

Անշուշտ, ոչինչ չէին տայ: Մարդիկ այն ժամա-  
նակ կասէին, թէ կօշիկների համար ոչինչ չպէտք է  
տալ, որովհետեւ նրանց վրայ աշխատանք չի թափ-  
ւում, թէ այդ գէպքաւմ, ուրեմն, ամեն մարդ էլ կօ-  
շիկներ ունի: Մեր կօշկակարը բաղցից չմեռնելու  
համար մի որ և իցէ այլ գործ պիտի սկսէր:

Թէպէտ և մեղանում կօշիկները ծառի վրայ չեն  
բանում, բայց կան առարկաներ, որի համար ոչինչ չի  
կարելի ստանալ, որ ոչ մի արժէք չունի, որովհետեւ

Նրանց վրայ ոչ մի աշխատանք չի թափւել։ Ջրհորի ջրի կամ գետի աւազի համար ոչ ոք ոչինչ չի տալիս, որովհետեւ նրանց ճարելու համար աշխատանք չի թափւել, որովհետեւ նրանք արդէն պատրաստ էին, նախ քան մարդկային աշխատանքը նրանց վրայ դորձադրւեց։

Ընդհակառակը՝ որքան աւելի շատ մարդկային աշխատանք է թափւում մի իրեղէն պատրաստելու համար, այնքան աւելի, ինչպէս ասում են, նա իւր մէջ «արժէք» է պարունակում, այնքան էլ աւելի փող կտան նրա համար։ Կտաւի արշինը աւելի թանգ արժէ, քան կօլենկորինը։ Ինչո՞ւ համար։ Որովհետեւ մի արշին կօլենկորը աւելի շուտ և հեշտ կարելի է պատրաստել, որովհետեւ մի արշին կօլենկորը իւր մէջ աւելի քիչ աշխատանք է պարունակում, քան մի արշին կտաւը։ Ոսկի շղթան պողպատեայ շղթայից թանգ է։ Ինչո՞ւ Արդեօք նրա համար, որ ոսկին աւելի լաւ է փայլում. արդեօք նրա համար, որ նա աւելի ծանր է Ո՛չ, պողպատեայ շղթան կարող է ոսկու նման փայլել կամ նրա չափ կշռել, —բայց բանը նրանումն է, որ ոսկին աւելի դժւար է գտնել. ոսկին գետնից հանելու համար անհրաժեշտ է աւելի մեծ աշխատանք, ըստ որում ոսկեայ շղթայի մէջ աւելի շատ աշխատանք է պարունակում, քան թէ պողպատեայ շղթայի մէջ։

Ահա դրա համար է, որ, երբ արհեստաւորին, կօշկակարին, գերձակին կամ հացթուխին վճարում են կօշիկների, բաճկոնի կամ հացի զինը, վճարում են խսկապէս այն աշխատանքի համար, որ պարունակուում է կօշիկների, բաճկոնի կամ հացի մէջ։

Եթէ հաց թխելու համար 1 ժամ ժամանակ է հարկաւոր, իսկ մի զոյտ կօշիկ կարելու համար — 10

ժամ, այն ժամանակ մի զոյտ կօշիկի փոխարէն կարելի է ստանալ 10 հաց, որովհետեւ կօշիկների վրայ թափւած աշխատանքը (կամ ինչպէս ասում են, — կօշիկների արժէքը) 10 անգամ աւելի է, քան հացի մէջ պարունակուած աշխատանքը (կամ՝ հացի արժէքը\*)։

Եթէ մի արշին մահուդի համար վճարում են մի ըուբլի արծաթ, դա նրա համար է, որ մահուդը պատրաստելու համար (այսինքն՝ ոչխարներին պահելու, նրանց բուրդը խուզելու, ներկելու և այլն) այնքան աշխատանք է թափւում, ինչքան մի արծաթ ըուբլու վրայ (արծաթը գտնելու, բերելու, հալեցնելու և այլն) օրինակ՝ 10 ժամ։ Մի արշին կօլենկորին տալիս են միայն 10 կոպէկ, որովհետեւ նրան պատրաստելու համար ոչ թէ 10 ժամւայ աշխատանք է թափւել, այլ միայն մի ժամւայ։

Ահա ինչու համար կարելի է տսել, թէ կօշկակարը, գերձակը, ատախճագործը և առհասարակ բանւորը ինքն իրան պահում է իւր աշխատանքով։ Նրանք բոլորը նախապատրաստում են իրեղէններ, յետոյ այդ իրեղէնները, որպէս ապրանք, ծախու և հանւում, և նրանց փոխարէն տալիս են ճիշտ այնքան, ինչքան աշխատանք որ պարունակուում է նրանց մէջ։

Ուրեմն՝ ինչքան շատ աշխատէ մի որ և իցէ արհեստաւոր, ինչքան նա շատ աշխատանք թափէ ապրանքի վրայ, այնքան աւելի արժէք կմտցնի նրա մէջ, այնքան նա աւելի շատ կստանայ իւր ապրանքի համար \*\*):

\* ) Եթէ ձեզ հացնե՞ն, թէ ինչ արժէ այս բաժակը, կօշիկը, ըստ և այլն, ուռք կպատասխանեք, թէ նրանց արժէքը չափուում է այն աշխատանքով, որ զոյտ է զբանած այդ երեք վրայ։

\*\*) Տե՛ս՝ ապրելուածը։

— Տեսնում էք, կարող են ասել ինձ, դուք մեզ խոստացաք ասել այն, ինչ որ գործարանատէրերն ու վարձողները թագցնում են մեզանից. իսկ հիմա ասում էք հէնց այն բանը, ինչ որ նրանք էլ են կըրկնում շարունակ, այսինքն՝ ով շատ աշխատէ, շատ էլ կստանայ:

Բայց սպասեցէք, առաջ մի վաղէք. և մի մեղադրէք ինձ, այլ լսեցէք: Ես մի փոքր առաջ ասացի, որ աշխատաւորը ապրանքի մէջ ինչքան շատ աշխատանք ներմուծէ, այնքան էլ աւելի կստանայ նրա փոխարէն: Կօշկակարը լաւ կաշուց պատրաստած և գեղեցիկ կարւած մաշիկների համար աւելի շատ փող կստանայ, բան վատ կարւածների համար: Այս ամենը ճշմարիտ է: Բայց որպէսզի մեր կօշկակարը կարողանայ կօշիկներ կարել, հարկաւոր է գործիքներ, կաշի և արհեստանոց ունենալ. իսկ այս բոլորը փող արժէ: Փականագործը նոյնպէս, եթէ ուզում է կողպէքներ շինել, պէտք է տուն վարձէ, գործիքներ գնէ. նա պէտք է մի որոշ ժամանակ սպասէ, մինչև որ ծախէ պատրաստած կողպէքները: Սրա համար գարձեալ փող է հարկաւոր: Փող ունեցողի համար ոչինչ. — Նա աշխատանոց էլ կշինի, գործիքներ էլ կգնէ, ապրանքներ էլ կպատրաստէ, յետոյ այդ ապրանքը կծախէ ըստ արժեւոյն, այսինքն՝ նայելով ինչքան աշխատանք է պարունակում իւր մէջ ապրանքը:

Բայց ինչ անէ այն մարդը, որը փողից դուրկ է, որ չի կարող արհեստանոց բաց անել, որ չի կարող ապրանք պատրաստել, չունենալով դրա համար անհրաժեշտ նիւթերը և գործիքները: Ի՞նչ պիտի անէ այն մարդը, որ, ինչպէս յաճախ պատահում է, ոչ ոքից օդնութեան յոյս չունի. այն ինչ՝ նա պէտք է

ապրի, պիտի ուտէ, խմէ, հագնուի և ընտանիք պիտի պահէ:

Բանւորը փող չունի, ըստ այնմ նա ապրանք էլ չի կարող ունենալ. ուրեմն՝ որպէս զի ապրի, նա ստիպւած է ինքն իրան ծախել, ստիպւած է ակամայից վարձու բանւոր, գերի գառնալ:

— Այսինքն՝ ինչպէս թէ «ինքն իրան ծախել», «գերի գառնալ»: Չէ որ վարպետի մօտ կամ գործարանում աշխատելը գերութիւն չէ: Ինչպէս արհեստաւորը, անպէս էլ գործարանի բանւորը, — ազատ մարդիկ են, աշխատում են նրա մօտ, ում մօտ որ իրանը են ցանկանում. աշխատում են իրանց քէֆն ուղածի չափ, և ոչ ոք իրաւունք չունի նրանց հրամայելու:

Այն մարդը, որ ծախում է իւր աշխատանքը, չի կարող ազատ լինել. նա անպատճառ իր գլխին տէր պիտի ունենայ և ունի էլ: Աղատ են այն մարդիկ, որոնք ստիպւած չեն իրանք իրանց ծախել: Իսկ այժմ այդպիսի ազատութիւն ձեռք բերելը շատ գժւար է: Բանւորը գործարան է գնում աշխատելու, որովհետեւ ստիպւած է գնալ. նա չունի իւր սեփական գործարանն ու գործիքները, նա հնազանդւում է գործարանատիրոջը, որովհետեւ չի կարող չհնազանդւել, որովհետեւ վերջինս ունի մի հզօր օդնական՝ նրա անունն է սով, որ բանւորին սպառնում է նրա անգործութեան դէպքում:

Գ.

Ստրուկ է, թէ չէ, դա իսկապէս միւնոյնն է, — կպատասխանէք ինձ: Բանը նրանում չէ, թէ ով ստրուկ է և ով ազատ. այլ նրանումն է, թէ արդեօք ճշմարդիտ է, որ մարդս իւր սեփական աշխատանքով կարող է հարստութիւն դիզել: Եւ գարձեալ կասեմ ձեզ՝

—մի շտապէք, հերթը դրան էլ կհասնի. չէ որ պէտք  
է ամեն ինչ լաւ պարզել ու հասկանալ:

Ամեն մի աշխատաւոր՝ լինի դա փականագործ,  
լինի ատախճագործ, դերձակ և կամ կօշկակար, ծա-  
խում է իրան, եթէ նա չունի ոչ փող, ոչ գործիքներ,  
ոչ էլ արհեստանոց։ Վաղ թէ ուշ նա վերջապէս դըտ-  
նում է մի գործարանատէր կամ արհեստագէտ, որը  
նրան փողով դնում է։

Ինչու է գործարանատէրը վերցնում բանւորին։  
Միթէ նրա համար որ խղճաց բանւորին և ուզում է  
օդնել նրան իւր գժբաղդութեան միջոցին։ Ոչ և ոչ։  
Գործարանատէրը գնում է բանւորին նրա համար,  
որովհետեւ նա համոզւած է, որ բանւորը դիտէ մե-  
քենայ կառավարել, երկաթ կռել-կոփել, կօշիկ կա-  
րել, մի խօսքով, որ ըանուորը աշխատել զիտէ։

Գործարանատէրը կամ արհեստագէտը բանւորին  
վերցնելիս աչքի առաջ է ունենում միմիայն վերջի-  
նիս ոյժն ու ճարպիկութիւնը։ Գործարանատէրը բան-  
ւորին ձրի, առանց փողի չէր վերցնի, եթէ վերջինս  
ոյժ չունենար։ Նրան հարկաւոր է միայն բանւորական  
ոյժը։ Գործարանատիրոջ համար հետաքրքրը այն է,  
արդեօք որքան վճարել այդ ոյժին։ Ահա ամբողջ  
հարցը սրանումն է կայանում։ Դժւար բան չէ իմա-  
նալ, թէ որքան պէտք է վճարել մի բաժակի, զամ-  
բիւղի կամ մի զոյդ կօշիկի համար։ Որոշում է դա  
այն ժամերի բանակութեամբ, որ գործ է դրւած այդ  
իրերը շինելու համար։ Դիցուք թէ բաժակը շինելու  
համար կէս ժամւայ աշխատանք է գործածւած, մի  
զոյդ կօշիկ կարելու համար—10 ժամ, իսկ մի ափսէ  
պատրաստելու—1 ժամ։ Եւ դիցուք թէ մեղ մօտ սո-  
վորաբար մի ժամւայ աշխատանքին 10 կոպէկ են վճա-

րում (որովհետեւ արծաթ 10 կոպէկանոցի մէջ էլ մի  
ժամւայ աշխատանք է պարունակուում)։ Հիմա շատ  
հեշտ է գտնել, թէ ինչ արժէ բաժակը։ Եթէ նա կէս  
ժամւայ աշխատանքի արդիւնք է, ապա ուրեմն կար-  
ժենայ 10 կոպէկանոցի կէսը, այսինքն՝ հինգ կո-  
պէկ։ Եթէ կօշիկ կարելու համար գնացել է 20 ժամ,  
ուրեմն նա արժէ 20 հատ 10 կոպէկանոց կամ 2 ր.,  
եթէ ափսէն մի ժամումն է պատրաստել, նա կարժէ  
10 կոպէկ։

Բայց ինչպէս որոշել, թէ բանի արժէ մարդը,  
թէ ինչքան պէտք է վճարել նրա ոյժի համար։

Դիցուք թէ բանւորը, այսինքն՝ նրա բանւորական  
ոյժը, գնուում է մի օրով։ Եւ դիցուք թէ այդ բանւորը  
ապրելու և աշխատելու, իւր բանւորական ոյժը պահ-  
պանելու համար օրական պէտք է ստանայ 60 կոպէկ,  
որ նա մսխում է (կերակորի, բնակարանի, շորերի և  
այլն) իւր ոյժը վերականգնելու համար։ այս գէպ-  
քում՝ մենք կարող ենք ասել, որ բանւորական ոյժը  
կարժէ 6 ժամւայ աշխատանք կամ 60 կոպէկ \*) (Եթէ  
10 կոպէկանոցը նոյն արժէքը ունի, ինչ որ մի ժամ-  
ւայ աշխատանքը)։

Գործարանատէրը շատ լաւ գիտէ, որ բանւորա-  
կան ոյժը արժէ 6 ժամւայ աշխատանք, այսինքն՝  
այնքան, ինչքան արժէ 6 հատ ափսէն կամ 12 բա-  
ժակը։ Ուրեմն նա բանւորին վճարում է նրա ոյժի  
համար, որպէս մի ապրանքի, որ արժէ 60 կոպէկ։

Ուրեմն՝ բանւորը միշտ իւր բանւորական ոյժի  
համար ստանում է այնքան, ինչքան նրան անհրաժեշտ

\*) Պէտք է առ մեջտ յեշել, որ բանւորական ոյժի արժէքը հաւասար  
է այնքան ժամւայ աշխատանքի, որը հարկաւոր է բանւորի ոյժը  
պահպանելու համար։

է այսպէս թէ այնպէս տպրւելու, այսինքն՝ իւր ոյժը պահպանելու համար:

Հիմա նորից դառնանը մեր խնդրին. ինչո՞ւ է գործարանատէրը վերցնում բանտորական ոյժը: Ինչո՞ւ է բանտորը ծախում իւր ոյժը՝ դա հասկանալի է: Նրան ստիպում է այդ անել քաղցը, որ աւելի զօրեղ է, բան մարդուս բնական ազատութեան զդացմունքը, քան ամօթքը:

Ուրեմն՝ ինչո՞ւ համար է վերցնում գործարանատէրը բանտորական ոյժը: Զւարճութեան համար: Ո՛չ Ուրեմն՝ ինչո՞ւ համար: Նրա համար, որպէսզի օգուտ ստանայ:

Պարզենք այդ բանը օրինակով: Դիցուք, մի ոմն բացեց բամբակի գործարան: Դիցուք, 1400 րուբլու բամբակ է դնել, իսկ 80 րուբլու մերենաներ. գազի և այլ անհրաժեշտ իրերի համար արւած է 24 րուբլի, և գործարանը սկսել է աշխատել: Ինչպէս էր կարծում, ինչո՞ւ գործարանատէրը բաց արեց գործարանը: Պարզ է. նրա համար, որ ուզում է թելլ (դերձան) աւելի թանգ ծախել, բան բամբակը, մերենան և այլն: Պարզ է որ նա, երբ բամբակից թելեր ստանայ, 1504 րուբլով չի ծախիլ նրան, այլ կուղենայ ծախել, օրինակ 2000 րուբլով \*): Բայց միայն ցանկանալը բաւական չէ, պէտք է իսկապէս ստանալ 2000 րուբ., թէ արդեօք նա կստանայ ցանկացեալ գումարը՝ դա գեռ հարց է: Եթէ հնարաւոր լիներ մի հրաշքով, առանց բանտորների, հիւսել բամբակը և եթէ մեր գործարանատէրը հիւսւածքը բերէր վաճառաւ-

\* ) 1504 րուբլին նրա ընդհանուր ծախըերի գումարն է. — 1400 րուբ. բամբակի գինն է, 80 ր. մերենաների և 24 ր. էլ ուշից երեր. բոլոր միասին 1504 րուբ.:

կանին ու նրա փոխարէն ցանկանար ստանալ 2000 ր., այն ժամանակ վաճառականը նրան այսպէս կպատասխանէր. «քո հիւսւածքի մէջ կայ, նախ՝ բամբակի արժեքը, այսինքն՝ 1400 րուբ., յետոյ մերենաների արժեքը—80 րուբ. և վերջապէս՝ ածուխի, գազի և այլն գինը, որ է 24 րուբ., ընդհանուր ոչ աւել և ոչ պակաս այստեղ 1504 րուբլու արժեք կայ. և սրանից աւելի ոչ մի կոպէկ չեմ տայ քեզ»:

Զգիտենք, թէ այս պատասխանը ինչպէս դուր կգար գործարանատիրոջ. միայն գիտենք, որ մինչեւ այժմ մերենաները իրանց չեն կարողացել գործել, և որ գործարանատէրի բախտից մերենաների մօտ պէտք է մարդ աշխատէ: Գործարանատէրը հասկանալով այս բանը, գիցուք, վարձում է 100 բանտոր և նրանց բանտորական ոյժի համար, ինչպէս մի ապրանքի, վճարում է 60-ական կոպէկ օրեկան:

Բանտորը, որ 60 կոպէկով օրն է վարձւած, մաքրում է բամբակը, թել է մանում, կծիկներ է պատրաստում և այլն. մի խօսքով, նա աշխատում է՝ իւր աշխատանքը մտցնելով բամբակի մէջ:

Առաջին ժամից յետոյ նա մտցնում է միայն մի ժամւայ աշխատանք և դրանով բամբակի արժեքը բարձրացնում է 10 կոպէկով (եթէ մի ժամւայ աշխատանքը 10 կ. արժէ): Երկու ժամւայ աշխատանքից յետոյ նա բարձրացնում է նրա արժեքը 20 կ., երեք ժամից յետոյ նա կմտցնի 3 ժամւայ աշխատանք և արժեքը կբարձրացնի 30 կ., և վերջապէս, 6 ժամ բամբակի վրայ աշխատանք թափելուց յետոյ՝ նա բարձրացնում է նրա արժեքը 60 կոպէկով. ճիշտ և ճիշտ այնքան, ինչքան գործարանատէրը վճարում է բանտորին նրա ոյժի համար: Ուրեմն՝ բանտորը 6 ժամ

աշխատելուց յետոյ ձեռք է բերում իւր օրավարձը:  
Այսպէս նա աշխատում է ամբողջ շաբաթը, որից յետոյ գործարանատէրը վերցնում է մանւածքը և տանում վաճառանոց, ցանկանալով կրկին ստանալ 2000 րուբլի:

— Ինչքան ես ուզում ապրանքիդ:—2000 րուբլի, ասում է վաճառականը:—Դա շատ թանգ է: Միթէ դու կարծում ես, որ քո ապրանքի մէջ 2000 րուբլու արժէք է պարունակում: Ո՞րտեղից, ապա մի հաշւենք ու տեսնենք: Հիւսւածքի մէջ պարունակում է բամբակի արժէքը, որ է 1400 րուբ., մերենայի արժէքը՝ 80 րուբլի, ածուխի և գաղի արժէքը՝ 24 րուբլի և վերջապէս բանւորական ոյժի արժէքը՝ 360 րուբլի (եթէ մի շաբաթւայ ընթացքում աշխատել են 100 բանւոր և օր շարունակ՝ օրական 6 ժամ և 10 կոպէկ ժամափարձով՝  $6 \times 6 \times 100 \times 10 = 360$  րուբլի) կամ հիւսւածքում ընդամենը պարունակում է 1864 րուբլու արժողութիւն: Հետեաբար, ես քեզ կարող եմ տալ միայն 1864 րուբ. և ոչ մի կոպէկ աւելի:—Ինէպէս, ուրեմն ես այստեղից չօգտւեցի: Ախր, ես ինքս եմ մսխել ապրանքի համար 1864 րուբլի: Ո՞ւր է բա իմ օգուտը: Ինչի՞ համար եմ ուրեմն գործարան բաց արել. ի՞նչ է իմ նրանից ստացած եկամուտը:

Իսկապէս եկամուտ չէր ստացւի, եթէ գործարանատիրոջ զիսում չծնէր մի միտք՝ այն է—ստիպել բանւորներին, իրանց 6 ժամւայ վարձը աշխատելուց յետոյ էլ, գարձեալ շարունակելու իրանց աշխատանքը:

— Ի՞նչ իրաւունքով դու մեզ ստիպում ես աւելի աշխատել, կարող էին ասել բանւորները. մեզանից ամեն մէկը արդէն աշխատել է իւր օրավարձը.

Հէ որ մենք բամբարձի վրայ աւելացրինք այնքան արժէք, ինչը կարժէ մեր բանւորական ոյժը:

— Ես ձեր բանւորական ոյժը գնել եմ ամբողջ օրեայ և ոչ թէ միայն 6 ժամւայ համար. ես ամբողջ օլը կարող եմ օգտամել ձեր աշխատանքից:

Եւ բանւորները, որոնք 6 ժամ աշխատելուց յետոյ պէտք է հեռանային գործարանից, որոնք պէտք է գնային հանգստանալու կամ իրանց համար աշխատելու, մնում են աւելի երկար և 6 ժամ այլ ևս աշխատաւմ: Գործարանատէրը նրանց նոր նիւթ է տաձիս, և այդպիսով գործը «Եօլա» է գնում: Ամեն մէկ ժամւայ աշխատանքից յետոյ բանւորները այս նոր բամբակի վրայ կաւելացնեն նոր արժէք և 6 ժամ աշխատելուց յետոյ նրանցից իւրաքանչիւրը կաւելացնի 6 ժամւայ արժէքը:

Ցայտնի բան է, որ այս վերջին արժէքը ոչինչ չարժէ գործարանատիրոջ—նա ամբողջապէս ձրի է: Այսպէս, մի բանւորը, օրեկան աշխատելով 6 ժամ, աւելացնում է  $10 \times 6 = 60$  (եթէ մի ժամ աշխատանքը կարժէ 10 կոպ.) կամ 60 կոպէկ արժէք. 100 բանւորը մի օրւայ մէջ կաւելացնի 100 անգամ աւելի կամ 60 ր., իսկ մի շաբաթւայ ընթացքում, աշխատելով 6 օր, նրանք արժէքի գինը կբարձրացնեն 6 անգամ աւելի՝ 360 րուբլու:

Հիմա որբան կստանայ մեր գործարանատէրը, եթէ ծախելու լինի մանւածքի այս մասը<sup>\*)</sup>: Անշուշտ, գարձեալ 1864 ր. կստանայ որովհետեւ մանւածքի մէջ կայ բամբակի արժէքը՝ 1400 րուբ., նոր մերենաների արժէքը՝ 80 րուբ., ածուխի և գաղի արժէքը՝

<sup>\*)</sup> Այսինքն՝ այն մասը, որ պատրաստած է աւելեալ ժամերում (6 ժամ):



—24 րուբ. և վերջապէս 3600 ժամւայ աշխատանքի արժէքը (360 րուբ.), որ գործարանատէրը բանւորներից ձրի է ստացել:

Գործարանատէրը այժմ ուրախութեամբ կհամաձայնի ծախել մանւածքը 1864 րուբ., որովհետեւ դանրան արժէ ոչ թէ 1864 րուբ., այլ միայն 1504 ր. (1400 րուբ. բամբակը, 80 րուբ. մեքենաները և 24 րուբ. էլ ածուխն ու գազը՝  $1400+80+24=1504$  րուբ.): Հիմա արգէն պարզ է, որ արգիւնաբերութիւնը օգուտ տւեց գործարանատիրոջ: Հիմա անենք վերջնական հաշիւը: Մեր գործարանատէրը բամբակի համար 2 անգամ տւեց 1400 րուբ., այսինքն՝ 2800 րուբ., 2 անգամ 80-ական րուբ. մեքենաների համար, այսինքն՝ 160 րուբ., 2 անգամ էլ 24-ական ր. ածուխի, գազի և այլն՝ 48 րուբ., և բանւորներին 360 ր. վարձագին վճարեց. ընդամենը ուրեմն նա մսիւց 3368 րուբ. ( $2800+160+48+360=3368$ ): Մանւածքի առաջին կէսի համար նա կստանայ 1864 րուբլի, երկրորդ կէսի համար նոյնպէս 1864 րուբլի կամ ամբողջ մանւածքի համար 3728 րուբլի ( $1864+1864=3728$ ). ուրեմն նա օգուտ ստացաւ 360 րուբ. ( $3728-3368=360$ ):

Որտեղից ստացւեց այս օգուտը: Պարզ բան է, որ հետեանք է այն հանդամանքի, որ գործարանատէրը օրւայ միւս կէսի համար (6 ժ. համար) բանւորներին վարձ չտւեց, որովհետեւ վերջիններս իրանց աշխատանքի եկրորդ կէսը ձրի են տւել նրան, որովհետեւ բանւորները, բացի 3600 ժամ, վարձատրւած աշխատանքից, բամբակի վրայ աւելացրին և 3600 ժամւայ ձրի, յաւելեալ աշխատանք, կամ ինչպէս ասում

են 3600 ժամւայ յաւելեալ արժէք \*):

Հիմա մենք գիտենք, թէ ինչու համար է վարձում գործարանատէրը բանւորին: Նրա համար է վարձում, որպէս զի բանւորի աշխատանքից օդտուի, եկամուտ ունենայ, որպէս զի նրա աշխատանքով ցաւելեալ արժէք» ստանայ: Ուրեմն՝ գործարանատէրը իւր եկամուտը ստանում է բանւորների աշխատանքից:

Բանւորները իրանց համար աշխատում են միայն օրւայ կէսը. իսկ նրա երկրորդ կէսը՝ գործարանատիրոջ համար: Բանւորները իրանց կեանքի կէսը աշխատում են իրանց և իւր ընտանիքի համար, իսկ միւս կէսը գործ է գրւում այն բանի համար, որպէս զի գործարանատէրը կարողանայ իւր բամբակից օդուտ, եկամուտ ստանալ, որպէս զի նա կարողանայ յաւելեալ արժէք ստանալ:

Այն, ինչ որ մենք ասացինք բամբակ արտաքերող գործարանատիրոջ մասին, կարելի է ասել և աշխարհի բոլոր արհեստագէտ վարպետների ու գործարանատէրերի մասին: Նրանք բոլորը գնում են բանւորներին, գնում են նրանց բանւորական ոյժը միմիայն նրա համար, որպէս զի նրանց աշխատանքից օդուտ բաղեն, որպէս զի նրանց ստիպեն պէտքից էլ աւելի աշխատել:

Դ.

Դուք իհարկէ կհամաձայնէք իմ ասածներին: Միայն կարող էք ասել, թէ բամբակի օրինակը ճշմարտանման չէ: Որտեղ և երբ լուած բան է, որ մեքենաները միայն 80 րուբ. արժենան կամ բամբակը —

\* ) Խնչ է ուրեմն «յաւելեալ արժէքը»: Դա այն արժէքն է որ բանւորները, իրանց օրավարձը աշխատելուց յիսոյ, աւելացնում են պատրաստած ապրանքի վրայ: Դա, ուրեմն, բանւորի չվարձատրւած աշխատանքն է:

միայն 1400 րուբ.։ Բոլորովին ճշմարիտ է։ Այս օրինակում մէջ բերւած թւերը դիտմամբ այսպէս են առնւած, որ հեշտ լինի հասկացնել թէ ինչումն է կայանում յաւելեալ արժէքը։

Հիմա ես ձեզ կեանքից օրինակ կրերեմ, և թւերը այնպէս ճիշտ կլինեն, որ ոչ ոք դրա դէմ ոչինչ բան չի կարողանայ ասել։

Ինչպէս յայտնի է, Անգլիայում ահադին քանտկութեամբ բամբակ է մշակում \*)։ Արդէն վաղուց է, այնտեղ գոյտթիւն ունին ահադին շողեշարժ գործարաններ, արդէն վաղուց է, այնտեղ բանտորները դադարել են իրանց համար աշխատելուց, այլ նորաստիպւած են իրանք իրանց ծախել և այդպիսով վարձկան մշտկ դառնալ նրանք, արդէն վաղուց է, դառնա աղքատութեան ու սովի են մատնւած։ Բայց դրա փոխարէն հարստանում են գործարանատէրերը։ Այդպէս ուրեմն՝ դիցուք, այդ գործարանատէրերից մէկին գործարան պահելն ու ամբողջ արդիւնագործութիւնը կարմէ 134,250 րուբ. տարեկան, իսկ տարին անցնելոց յետոյ նա ծախում է իւր ապրանքը և ստանում 159,000 ր.։ Ուրեմն նա օգուտ է ստանում 24,750 րուբ. (159,000—134,250=24,750) կամ 18%։ Դուք իհարկէ գիտէք, որ սա շատ մեծ վաստակ չէ, որովհետեւ հէնց Ռուսաստանում կան գործարաններ, օրինակ՝ շաբարի գործարաններ, որ 40, 50 կամ աւելի տոկոս եկամուտ են տալիս։ Հիմա աեսնենք, որտեղից է ստանում գործարանատէրը այդ եկամուտը։ Որպէս զի աւելի պարզ լինի, հաշւենք

\*) 1873 թւ. Բանակայում մշակւած է 1264 միլիոն ֆունթ բամբակ 33½ միլիոն լիլիների միջոցով։

թէ որքան է նա մի շաբաթում ծախսում արդիւնաբերութեան վրայ։

Նրա գործարանում շոգիի ոյժով շարժում է 10,000 լիլիկ։ Մեկ լիլիկը շաբաթւայ ընթացքում կարող է տալ (իհարկէ բանտորի միջոցով) 1 գունթմանւածք։ Լիլիկների թիւը 10,000 է։ Ուրեմն, — գործարանում մի շաբաթւայ ընթացքում պատրաստում է 10,000 ֆ. մանւածք։ Բայց 10,000 ֆ. մանւածքը ստանալու համար պէտք է 10,000 ֆունթից աւելի բամբակ գնել, որովհետեւ մանելու ժամանակ նրա մի մասը միշտ փշանում է։ Մեր գործարանի համար պէտք կլինի գնել 10,600 ֆ. բամբակ, որովհետեւ 600 ֆ. պատրաստելու ժամանակ վնասաւում է։ Բամբակի ֆունթը 1871 թ. Անգլիայում արժէր  $19\frac{1}{2}$  կ., ուրեմն՝ 10,600 ֆունթի համար պէտք է 10,600 անդամ աւելի ծախել, այսինքն՝ 2067 րուբլի ( $19\frac{1}{2} \times 10,600 = 2067$ )

Այս բամբակից մանւածքը պատրաստելու համար հարկաւոր են մերենաներ, զանազան օժանդակիչնիւթեր և բանտորական աշխատանք։ Մերենաները, այսինքն, լիլիկները շոգեմերենաների հետ կարծեն 60,000 րուբ.։ Բայց որովհետեւ մերենաները շուտ չեն մաշւում, այլ կարող են 10 տարւան դիմանալ, դրա համար մերենաների վրայ տարեկան ծախսը չի լինիլ 60,000, այլ 10 անդամ պակաս, այսինքն՝ 6000 ր. իսկ շաբաթական ծախսը (եթէ մերենաները տարեկան 50 շաբաթ են աշխատում) 50 անդամ պակաս կլինի՝ 120 րուբլի։ Յետոյ մերենաների համար անհրաժեշտ է վառելիք, օրինակ՝ բարածուխ, իւղ (մերենայի զանազան մասերը իւղելու համար), դազ (գործարանը լուսաւորելու համար) և այլն։ Մեր գոր-

ծարանի համար շաբաթական, դիցուք 24 րուբ. 60 կ-ածուխ է հարկաւոր և 6 րուբլու դադու Գործարանի համար վարձւած շինութեան, գործարանատէրը շաբաթական 36 րուբ. է տալիս Գործարանատիրոջ ամբողջ շաբաթական ծախսը՝ բամբակի, մեքենաների, ածուխի, լուսաւորութեան, իւղի, բնակարանի համար կլինի 2284 րուբ. 50 կոպ.: Բայց այս բոլոր հում նիւթը ոչինչ չի տայ, եթէ բանւորի ձեռը չկպչի նրան, եթէ նրա վրայ աշխատանք չթափուի: Դրա համար գործարանատէրը 135 բանւոր է վարձում (նրանցից ամեն մինը պէտք է 74 իլիկ զեկաւարէ) և նրանց բանւորական ոյժին վճարում է ճիշտ այնքան, ինչքան հարկաւոր է այդ ոյժը. վերականգնելու համար կամ ուրիշ խօսքով՝ այնքան է վճարում, որ բանւորը կարողանայ ապրել (ուտելիք, բնակարան, հաղուստ և այլն). դիցուք թէ նա բանւորին շաբաթական տալիս է 2 րուբ. 25 կոպ.: Այդ հաշւով բոլոր բանւորները միասին շաբաթական կստանան 303 րուբ. 75 կոպ.:

Եթէ բանւորները միայն իրանց համար աշխատէին, այսինքն՝ եթէ նրանք գործարանատիրոջ տային այնքան աշխատանք, որքան իրանք են ստանում իրեւ օրավարձ, այն ժամանակ հեշտ կլինէր հաշւել նրանց պատրաստած 10,000 ֆ. մանւածքի արժէքը՝ եւ իսկապէս՝ այդ մանւածքի մէջ պարունակում են՝ 1) բամբակի արժէքը 2067 րուբլի, 2) մեքենաների արժէքը 120 րուբ., 3) ածուխի արժէքը 24 ր. 60 կոպ., 4) իւղը՝ 24 րուբ. 60 կոպ., 5) դագի արժէքը 6 րուբ., 6) բնակարանի վարձ՝ 36 րուբ., և 7) բանւորների վարձը 303 րուբ. 75 կոպ.: Բոլորը միասին կլինի 2581 րուբ. 95 կոպ., իսկ մի ֆունիքը 10,000 անգամ պակաս կամ մօտաւորապէս 26 կոպէկ կարծենայ:

Այն ինչ, մեր գործարանատէրը մէկ ֆունիք մանւածքը կծախէ ոչ թէ 26 կոպ., այլ 31<sup>5/8</sup> կոպ., իսկ 10,000 ֆ. մանւածքը՝ 3162 րուբ. 50 կ., այսինքն՝ 580 րուբ. 55 կոպ. (3162 ր. 50 կ.—2581 ր. 95 կ.=580 ր. 55 կ.) մեր հաշուածից աւելի:

Եթէ գործարանատէրը 580 րուբ. 55 կ. աւելի ստացաւ, գրա գաղտնիքը նրանումն է, որ մանւածքի մէջ պարունակում է նոր արժէք, որը առաջ չկար, որը աւելացրին բանւորները իրանց չվարձատրւած աշխատանքով: Հետևաբար մենք տեսնում ենք, որ 580 րուբ. 55 կոպ. առաջ եկաւ բանւորների չվարձատրւած աշխատանքի, նրանց ստեղծած յաւելեալ արժէքի միջոցով:

Այդ բանւորները ստացան մի շաբաթւայ աշխատանքի համար 303 րուբ. 75 կոպ., այն ինչ մի շաբաթւայ ընթացքում նրանք ոչ թէ իրանց վարձն են հատուցել աշխատանքով, այլ բամբակի վրայ աւելացրել են 580 րուբ. 55 կոպ. չվարձատրւած աշխատանքը՝ նրանցից ամեն մէկը օրեկան 37<sup>1/2</sup> կոպ. է ստանում, բայց նա ոչ թէ միայն այդ 37<sup>1/2</sup> կոպ. է վերադարձնում տիրոջը բամբակի արժէքը բարձրացնելով, այլ աւելացնում է և նոր արժէք (յաւելեալ արժէք՝) 58<sup>1/2</sup> կոպ.: Ուրեմն՝ չվարձատրւած աշխատանքը տեսում է 1<sup>1/2</sup> անգամ աւելի, քան վարձատրւածը, ուրիշ խօսքով՝ բանւորը գործարանատիրոջ համար 1<sup>1/2</sup> անգամ աւելի է աշխատում, քան իրահամար:

Յաւելեալ արժէքը 1<sup>1/2</sup> անգամից աւելի է վարձատրւած աշխատանքից կամ, ինչպէս ասում են, յաւելեալ արժէքի չափը 1<sup>1/2</sup> է (կամ 150<sup>0/0</sup>) \*):

\*) Ուրեմն՝ յաւելեալ աշխատանքից չափը ոչ այլ ինչ է, եթէ ոչ

Հիմա, կարծեմ, ձեզ համար պարզ է, որ իւրաքանչիւր եկամուտ արդիւնք չէ աշխական աշխատանքի. մենք տեսանք, որ գործարանատէրը իւր եկամուտը ստանում է ոչ թէ իւր սեփական աշխատանքից, այլ օտարի, բանտորի աշխատանքից:

Իսկ արհեստագէտները, կալւածատէրերը, չի՞նովիկները, վաճառականները և այլն ինչով են ապրում. ինչ կարելի է ասել իրանց եկամտի մասին: Սկսենք արհեստաւորից:

Դուք գիտէք, ի հարկէ, որ ոտնամանների մեծ մասը պատրաստում է մասնաւոր արհեստանոցներում, որտեղ արհեստագէտը հոկում է աշխատանքի վրայ, ենթարհեստաւորները աշխատում են վարձով, իսկ աշակերտները ձրի: Որ արհեստաւորը աշակերտի աշխատանքից եկամուտ է ստանում, գու փօքրիկ երեխանելն էլ գիտեն: Այստեղ մենք յիշեցինք ենթարհեստաւորների չվարձատրւած աշխատանքի մասին: Գիտէք, իհարկէ, թէ ինչքան գժւար է կօշկակարի աշխատանքը: Գլխիկոր նստած աթոռի վրայ, նեխւած օդում, մութ սենեակի մէջ, նա ստիպւած 15, 16 ժամ շարունակ աշխատել միայն նրա համար, որ իրա գոյութեան, ապրելու համար միջոց ճարէ: Նա փողը ստանում է շինւած իրերի հաշւով. մի զոյգ զանգապանների (ՏՏԻՑՊԵՏԵՎ) համար նա ստանում է 90 կոպ.: Յաջող պայմաններում լաւ ենթարհեստաւորը կարող է 15 ժամւայ ընթացքում 2 զոյգ զանշվարձատրւած և վարձատրւած աշխատանքների յարաբերութիւնը: Եթէ, օրինակ՝ մշակը իրա համար 4 ժամ է աշխատում, իսկ կապիտալիստի համար 8 ժամ, այն ժամանակ չվարձատրւած աշխատանքը 2 անգամ շատ է վարձատրւածից: և այդ գէպը յաւելեալ արժէքի չափը 2 է կամ 200%: Եթէ նա 6 ժամ՝ իրա համար և 6 ժամ էլ կապիտալիստի համար է աշխատում, այն ժամանակ յաւելեալ արժէքը չափը 1 է կամ 100%:

գապան կարել և իւր աշխատանքի համար ստանալ 1 րուբ. 80 կոպ.: Տեսնենք հիմա, թէ արհեստագէտի եկամուտը որտեղից է ստացւում,

Մի զոյգ զանգապանի համար գնում է 2 րուբ. 10 կ. մինչև 2 ր. 55 կ.—կաշի, բէզին և կօշկի ներբան (պodoшва). մնացեալ նիւթը (թել, «բիզ», մեխեր և այլն) 10 կոպ., բնակարանն էլ, գիցուք, 10 կոպ. \*), ենթարհեստաւորի աշխատանքը 90 կոպ.: Եթէ ենթարհեստաւորը ստանար իւր աշխատանքի համար այն բոլորը, ինչ որ նրան է պատկանում, այն ժամանակ մի զոյգ զանգապանների մէջ պարունակւած կլինէր նիւթի (կաշի, բէզին և այլն) արժէքը 2 րուբ. 55 կ. բնակարանի արժէքը 10 կոպ., ենթարհեստաւորի աշխատանքի արժէքը 90 կոպ., այնպէս որ զանգապանները պիտի արժէին 3 րուբ. 65 կոպ.: Այն ինչ արհեստագէտը ամեն մի զոյգ զանգապանը ծախում է 5 րուբլով, այսինքն՝ 1 րուբլի 35 կոպէկով աւելի թանգ:

Որտեղից է այդ 1 րուբ. 35 կոպ.: Պարզ է, որ այդ փողը կաշու, բէզինի, մեխերի և այլն կամ բնակարանի մէջ չէր պարունակւում. այս նոր արժէքը կարող էին միայն բանւորները ստեղծել: Ուրեմն՝ մեր ենթարհեստաւորը 90 կոպէկով վարձատրւած աշխատանքից զատ աւելացրեց արհեստագէտի օգտին և չվարձատրւած աշխատանքը 1 րուբ. 35 կոպ.: Դա յաւելեալ արժէքն է, որից օգտւում է, իհարկէ, միայն արհեստագէտը: Դարձեալ ուրեմն՝ չվարձատրւած աշ-

\*) Բնակարանը եհարկէ աւելի թանի արժէք, քան 9 րուբ. բայց պէտք է աչքի առաջ ունենալ, և այն որ այդ բնակարանի մէջ ոչ թէ 1 զոյգ, այլ 50, 100 կամ աւելի զոյգ կօշեկինը են կարւում, այնպէս որ մի զոյգի համար բնակարանի ծախս ընկնում է անհամեմատ բեռ, որինակ՝ 10 կոպ.:

խատանքը վարձատրւածից  $1\frac{1}{2}$  անգամ աւելի է, դարձեալ յաւելեալ արժեքի շափ  $1\frac{1}{2}$  է կամ  $150\%$ ։ Բանւորը 15 ժամ աշխատանքից միայն 6 ժամը իրահամար է աշխատում, իսկ 9 ժամը արհեստադէտի և այդպիսով հարստացնում է նրան։

Հիմա տեսնում էր, թէ ինչ միջոցով է ստանում արհեստադէտը իւր վաստակը։ Աղդեօք իւր սեփական աշխատանքով։ Պարզ է, որ ոչ Գործարանատիրոջ նման սա էլ կարող է հարստանալ միայն ուրիշի աշխատանքով։

Ե.

Իսկ վաճառականները, կալւածատէրերը, չինովնիկները և այլն։

Հիմա հերթը նրանց էլ կհասնից եւ պարզ ցոյց տալու համար, թէ որտեղից է նրանց եկամուտը, ինչ աշխատանքով են ապրում՝ վերցնենք մի օրինակ։

Դիցուք, մի որ և իցէ գործարանատէր իւր գործի մէջ գրեց  $150,000$  ր. փոզ ինչ գործ է դա, մեղ համար միենոյն է, օրինակ՝ ասենք, թէ դա շաբարի գործարան է։ Մեր գործարանատէրը դնեց մերենաներ, ճակնդեղ (свекловица), և այլ պէտքական նիւթեր, նա բանւորներ գործեց ու մի տարուց յետոյ պատրաստւած շաբարը ուղղում է ծախել  $195,000$  րուբ., Այսպիսով գործարանատէրը իւր  $150,000$  րուբ. փողից  $45,000$  րուբի եկամուտ է ուղղում ստանալ։ Մենք արդէն դիտենք, որ այդ  $45,000$  րուբ. բանւորների չփարձատրւած աշխատանք կամ յաւելեալ արժեքն է։ Գործարանատէրը ուրախութեամբ իրան կպահէր բոլոր այդ եկամուտը, թէպէտ և այդ նրան ոչ մի աշխատանք չարժէ, բայց փողից զրկւելը շատ էլ հեշտ բան չէ։

Յաւելեալ արժեքի ուրիշ շատ սիրահարներ ևս

կան։ Այսեն մէկը կցանկանար իրա գրպանը լցնել։ Նախ և առաջ իւր ձեռքն է կարկառում վաճառականը։ Գործարանատէրը առանց վաճառականի ոչինչ չի կարող անել, որովհետեւ նա լաւ դիտէ, որ ապրանքը չծախած ոչ մի օդուտ չի ստանայ. պէտքէ ապրանքը ծախել, փոխանակել նրան փողով և միայն այն ժամանակ կարելի կլինի ասել, թէ գործը կատարւած է։ Ուրեմն, պէտքէ որոնել վաճառական՝ ապրանքը նրան ծախելու համար։

Գալիս է վաճառականը։ Նա պատրաստ է գնել ապրանքը. բայց միայն այն պայմանով, որ ծախսողը նրան մի քանի տոկոս զիջում անի, Գործարանատէրը մի կարող չհամաձայնել. ու դիցուք, նա զիջում է վաճառականին և ծախում է իւր շաբարը ոչ թէ  $195,000$  րուբ., այլ  $187,000$  րուբ.։ Գործարանատիրոջ վաստակը (прибыль) պակասեց. նրա մի մասը վաճառականի դրանը մտաւ. բայց դրա փոխարէն գործարանատէրը ստացաւ զուտ փող. իսկ վաճառականը այստեղ  $7500$  րուբ. վաստակ ունեցաւ։ Ինչպէս ստացաւ նա այդ վաստակը. իւր սեփական աշխատանքով։ Իհարկէ, ոչ նրա վաստակը գործարանատիրոջ վաստակի մի մասն է կազմում. ուրեմն՝ դա բանւորների չփարձատրւած աշխատանքի դինն է։

Հետեւաբար, վաճառականը նոյնպէս ապրում է ուրիշի աշխատանքով՝ գործարանական բանւորների աշխատանքով։ Վաճառականից յետոյ գալիս է կալւածատէրը։ Գործարանատէրը իւր գործարանը շինում է կալւածատիրոջ հողի վրայ։ Իհարկէ, երբեմն գործարանները շինուում են և սեփական հողի վրայ, բայց յաճախ ուրիշի հողի վրայ։ Հողի տէրը իւր հողի

Համար վարձատրութիւն, այսպէս կոչւած, ըենտան է ուղում ստանալ:

Ի՞նչ արած, ասում է գործարանատէրը, կամայակամայ պէտք է ըենտան վճարել: Եւ նա իւր վաստակից 3000 բուբնի տալիս է հողատիրոջ իբրև ըենտա:

Ուրեմն, հողատիրոջ վաստակը որտեղից է ստացւում: Յայտնի բան է, գործարանատիրոջ վաստակից: այսինքն՝ գործարանատկան բանւորների չփարձատրւած աշխատանքից \*):

Մեր գործարանատիրոջ մօտ մնաց 34,500 բուբ. վաստակ: Բայց հիմայ էլ նա չի կարող այդ բոլոր փողը ձգել իւր գրպանը: Մենք ասել էինք, որ նա գործարանը շինելու համար ծախսել է 150,000 ր.: Այս 150,000 բուբ. գործարանատէրը կարող էր ինքը ունենալ կամ ուրիշից փոխ առնել: Խոկապէս որ՝ կան շատ հարուստ մարդիկ, որոնք, փոխանակ մի որ և իցէ գործով զբաղելու, իրանց փողերը տալիս են ուրիշին տոկոսով և ամեն տարի ստացած տոկոսների մի մասը աւելացնում դրամագլխի վրայ: Ահա և մեր գործարանատէրը այսպիսի կապիտալիստների մէկից փոխ առած կլինի իւր փողը: Դիցուք թէ կապիտալիստը տւեց նրան պէտք եղած 150,000 բուբ. 6% ով: Այն ժամանակ գործարանատէրը իւր վաստակից 9000 բուբ. ստիպւած կլինի տալ կապիտալիստին: Նրա մօտ կմնայ միայն 25,500 բուբ., իսկ կապիտալիստը սուսիկ-փուսիկ ուրիշից իրա գրպանն է գլուխում 9000 բուբ.: Բայց որի՞ գրպանից: Առաջին պահ

\*). Այստեղ մը խօսքը այնպիսի հողատիրոջ մասին է, որ ինքը չի պարագան տնտեսութեամբ: Եսկ այն հողատիրոջը, որ ինքն է իւր գործը վարում, ապրում է նոյնպէս վարձու բանւորների յաւելեալ աշխատանքով, ինչպէս՝ հողագործների, հնձւորների և այլն աշխատանքով:

այնպէս է թւում, թէ գործարանատիրոջ գրպանից: Բայց խոկապէս այս 9000 բուբ, խլւած է բանւորներից նրանց չփարձատրւած աշխատանքից:

Ուրեմն՝ գործարանատիրոջը մնում է 25,500 բ.: Բայց այս մնացած փողն էլ նա չի կարող իւր ուղածի պէս գործադրել: Կառավարութիւնը նոյնպէս ուղում է մաս ունենալ այս վաստակի մէջ:

Ամենաշատ հարկ վճարողները իրանք աղքատները, բանւորներն են: Բայց հարկ տալիս են ֆարբիկանտներն ու կապիտալիստներն էլ: Մեր վերոյիշեալ ֆարբիկանտն էլ իւր վաստակի մի մասը բաժին է հանում կառավարութեան: Դիցուք նա տալիս է 500 բ. հարկ: Հասկանալի է, որ այս 500 բուբ. էլ բանւորներն են տալիս, որովհետև ոչ մի ֆարբիկանտի ունեցածը իւր սեփական աշխատանքի արգիւնը չէ. այլ նա, եթէ տալիս է, տալիս է միայն յաւելեալ արժէրը՝ բանւորների չփարձատրւած աշխատանքը:

Մեր ֆարբիկանտի մօտ կմնայ այլ ևս 25,000 բուբ., այդ փողից 750 բուբ. դնում է գործարանի կառավարչի ուսձկի, 1500 բուբ. ապահովող ընկերութեան և 2250 բուբ. այլ ծախքերի համար: Մնում է 20,500 բուբ. զուտ արգիւնը, որ կապիտալիստը կարող է գործադրել այնպէս, ինչպէս ինքն է կամենում:

Եւ արար աշխարհ պիտի գոռայ, որ այս 20,500 բուբ. նրա «սեփականութիւն» է, որ նա իւր «սեփական աշխատանքով» է ձեռք բերել այն:

Զ.

Հիմայ մենք կարող ենք ամփոփ և պարզ պատասխան տալ այն հարցին, որ գւած է գրքի սկզբում՝ մարդիկ ինչով են ապրում: Ո՞վ իւր սեփական աշ-

խատանքով է ապրում և ոչ ուրիշից Ո՞վ ինչով է ինքն իրան պահում, —իւր սեփական աշխատանքով, թէ ուրիշից:

Հինա մենք կարող ենք բոլոր մարդկանց երեք կարգի բաժանել:

Առաջին կարգին պատկանում են նրանք, որոնք աշխատում են իրանց համար և պահում են իրանց՝ սեփական աշխատանքով. դրանք այն արհեստաւորներն են, որոնք ունին իրանց սեփական արդիւնաբերական գործիքները. այն գիւղացիները, որոնք այնքան հող ունեն, որ կարողանում են սեփական աշխատանքով իրանց գոյութիւնը պահել:

Եկորդ դասակարգն են կազմում այն բանւորները, որոնք չունին արդիւնաբերութեան սեփական գործիքներ և այն գիւղացիները, որոնք շատ քիչ հող ունին կամ իսկի չունին և որոնք ստիպւած են ծախել իրանց բանւորական ոյժը: Այս դասակարգին պատկանում են բոլոր ենթարհեստաւորները (පօմաստերե), գործարանական բանւորները, բատրակները, և այլն:

Իսկ երրորդ դասակարգին պատկանում են այն մարդիկ, որոնք ունին արդիւնաբերութեան համար գործիքներ, բայց իրանք անձամբ չեն աշխատում, այլ ուրիշներին են ստիպում աշխատել: Դրանք են՝ գործարանատէրերը, վարպետները, հողատէրերը և այլն:

Գրքի առաջին գլխում մենք տեսանք, թէ այսօր ինչպիսի կարգեր գոյութիւն ունին, թէ ինչպէս մի փոքրիկ խումբ մարդիկ ապրում են ուրիշ աշխատանքով: Բայց ինչ է դրա պատճառը: — Գլխաւոր

պատճառներից մէկը այն է, որ ժողովրդական մասսան ազատ չէ, որ նա ստիպւած է ծախել իրան, բանւորական ոյժը:

Բայց դրա պատճառը ինչ է, ինչից է ստիպւած նա իրան ծախում. — որովհետեւ նա արդիւնաբերութեան գործիքներ չունի: Իսկ մենք արդէն դիտենք, որ նա, ով որ զուրկ է այդ գործիքներից, ստիպւած է ինքն իրան վաճառանոց հանել, հակառակ դէպօւմ՝ կարող է քաղցից մեռնել: Հետևաբար, եթէ մենք ցանկանում ենք ուղղել, բարուքել կամ փոփոխել հիմիկւայ կարգերը, եթէ ուզում ենք վերջ տալ աղքատների տառապանքներին և հարուստների շոայլութիւններին՝ ինչ պիտի անենք: Անկասկած՝ պէտք է այնպիսի կարգեր հաստատենք, որ ամեն մարդ ունենայ արդիւնաբերութեան սեփական գործիքներ. այն ժամանակ իւրաքանչիւրը իրան համար կաշխատի: Ոչ որ այն ժամանակ ուրիշի համար չի աշխատի, ոչ ոք իւր աշխատանքից ուրիշին յաւելեալ արժէք չի տայ: Այն ժամանակ ոչ ոք չի գնի ուրիշներին, նրանց բանւորական ոյժը. ոչ ոք չի խլի յաւելեալ արժէքը, ոչ ոք չի կարող հարստանալ ուրիշի աշխատանքով, ոչ ոք չի պահի ինքն իրան ուրիշի աշխատանքով:

— Ուրեմն՝ այնպէս անել, որ ամեն մարդ ունենայ արդիւնաբերական սեփական գործիքներ: Բայց ինչպէս անել այդ: Ահա դրա մէջն է ամբողջ ինդիրը, կասէք գութը:

— Ինչպէս անել. շատ պարզ՝ խլել արդիւնաբերութեան գործիքները նրանցից, որոնք շատ ունին և տալ այն օգտելու աշխատաւորներին:

— Ոյժով խլել: Ինչպէս միթէ դա կարելի է. միթէ դա բարոյական տեսակէտից դատապարտելի չէ:

Արդեօք այդ բանը իրագործելի՞ է, կարելի՞ է և բարոյական է—ահա այն հարցերը, որ կաշխատենք պարզաբանել այստեղ։

Ա.

Նախ և առաջ տեսնենք՝ արդեօք իրագործելի՞ է. կարելի՞ բան է արդեօք, որ իւրաքանչիւր մարդ ունենայ աշխատանքի սեփական գործիքներ։

Այս հարցը, ինչպէս թւում է, այնքան էլ հասարակներից չէ։ Առաջին նւագ թւում է, թէ դա այնքան էլ դժւար չէ։ Չէ որ եղել է ժամանակ, երբ ամեն մի աշխատաւոր ունեցել է իւր սեփական արհեստանոցը, որտեղ նա ինը տէր է եղել։ Բայց այն ժամանակները մարդիկ շատ քիչ էին։ Այս բազաքում, որուեղ 200 տարի առաջ 500 հազար մարդ կար, հիմա հաշւում են 4 միլիոն մարդ (Լոնգոն՝ Անդլիայում)։ Այս երկում, որուեղ 200—300 տարի առաջ 2 միլիոն ժողովուրդ կար, հիմա կարող է լինել 10 միլիոն և աւելի էլ. այնտեղ, որտեղ առաջ բաւական էր 1000 զոյդ կօշիկ, այժմ հարկաւոր է 10 միլիոն զոյդ։ Որտեղ առաջ գործածում էր 1 միլիոն արշին կտաւ, այնտեղ այժմ պէտք է 10, 20 անգամ աւելի։ Հետեւաբար, այդ հին ժամանակները, թէպէտ և այնքան էլ ցանկալի բան չէ նրա վերադարձը, իւր կնոջ և որդոց հետ սեփական արհեստանոցում աշխատող ջուհակը կամ տանը կողպէքներ պատրաստող փականագործը չէր կարող շատ պատրաստել՝ ոչ կտաւից և ոչ էլ կողպէքներ։ Քիչ էին աշխատում, որովհետեւ պահանջն էլ քիչ էր։ Ջուհակը գործում էր իւր կտաւը վատ «գաղղահ»ի վրայ, փականագործը շինում էր իր կողպէքները հին գործիքներով։

Այժմ ջուհակը ստիպւած է գործել մեքենաների

օգնութեամբ։ Եթէ նա կամենար կտաւը գործել «գաղղահ»ի վրայ, դա միենոյն բանը կլինէր, եթէ մէկը ձիով գնար այնտեղ, ուր տանում է և երկաթուղին։ Նա ստիպւած կլինէր աշխատել 100 ժամ այն բանի վրայ, որը մեքենայի միջոցով կարելի կլիներ պատրաստել 1 ժամւայ մէջ։ Ներկայ ժամանակում ապրանքի մեծ պահանջ է զգացւում։ Որպէս զի անհրաժեշտ քանակութեամբ ապրանք արտադրւի, հարկաւոր են ահագին գործարաններ, շոգեշարժ մեքենաներ և մեծ խանութեներ։ Ներկայումս, օրինակի համար, միայն Անդլիայում 450,087 բանւորներ 33 միլիոն իլիկներով բամբակ են մանում։

Եւ եթէ իւրաքանչիւր բանւոր ունենար սեփական արհեստանոց, իլիկներ, այսինքն՝ եթէ նրանցից իւրաքանչիւրը անկախ աշխատաւոր լինէր, այն ժամանակ նրանք բոլորը միասին չեին կարողանայ գործել այժմւայ գործւածքի մի 20-րդ մասը։ Այսն տեղ կզգացւէր բրդեայ գործւածքի պակասութիւն, և նոյն իսկ մեր գեղջկուհիք կդանդաւէին այդպիսի կարգերից։

Ահա տեսնում էք, որ այնպէս էլ հեշտ և կարեւիր բան չէ, որ իւրաքանչիւր մարդ ունենայ իւր արհեստանոցը և աշխատանքի սեփական գործիքներ։ Այս ժամանակ, յիրաւի, բանւորները չեին ճնշւի, բայց դրա փոխարէն ամեն տեղ կզգացւէր ամենաանհրաժեշտ իրերի պակասութիւն, կարիք և նոյն իսկ սովոր։

Այս, սովոր... ինչպէս ինքներդ էլ շուտով կհամոզւէք։ Հիմա Անդլիայում, օրինակ, համարեայ չկան բանւորներ, որոնք ունենային աշխատանքի սեփական գործիքներ։ Իսկ իրանց սեփական հողը մշակող գիւղացիներ այնտեղ գոյութիւն անդամ չունին։ Այնտեղ կան միայն խոշոր կալւածատէրեր, որոնք ունին ահա-

գին կալւածներ, շօդեշարժ արօրներ, հնձելու և կալսելու համար շոգեշարժ մեքենաներ, և որոնք իրանց հողերը մշակելու համար վարձում են գիւղական մշակներ։ Իսկ գիւղական մշակները ոչինչ չունին՝ ոչ հող, ոչ գործիք և նոյն իսկ աչ սեփական խրճիթ։ Հետեաբար՝ նրանք ստիպւած են իբրև ստրուկներ, իրանց իրանց ծախել կալւածատիրոջը և տալ նրան իրանց յաւելեալ աշխատանքը։ Այդպիսի բանւորների գրութիւնը անտանելի է. եւր կարդում ես գրքերում Անդլիայի գիւղական բանւորների խղճուկ գրութեան նկարագրութիւնը, աներեակայելի սարսափ է տիրում քեզ, տեսնելով անգլիական կալւածատերերի անկուշագայութիւնը։

Բայց ինչ էր կարծում ի՞նչ կլինէր, եթէ այդ բանւորներից իւրաքանչիւրը ստանար մի կտոր հող. դրանից օդուտ կստանար արդեօք Անդլիայի ամբողջ հողագործ ժողովուրդը։ Բոլորովին ոչ 1875 թւին Անդլիային կերակրելու համար հարկաւոր էր 22 միլիոն կվարտեր \*) հաց (1 կվարտերը = 75 գարնցի)։ Անդլիան ինը տալիս է միայն 13 միլիոն կվարտեր ցորեն, իսկ 9 միլիոն կվարտերը ներմուծում է ուրիշ երկրներից։ Եթէ Անդլիայի հողը բաժանեած լինէր մանր հողաբաժինների, որտեղ կարելի չլինէր գործածել ոչ շոգեշարժ, ոչ ցանելու և ոչ էլ երնելու (Ենյալկա) մեքենաներ, այն ժամանակ ամբողջ Անդլիայում չէր հաւաքւի ոչ թէ միայն 13 միլիոն կվարտեր, այլ նոյն իսկ 5, 6։ Այն ժամանակ Անդլիայում կոկուէր սովը։

Այժմ, գուրք ինչպէս տեսնում էր՝ չի կարելի, որ ամեն ոք ներկայումս աշխատանքի սեփական գործիքներ ունենայ։

\*) 11/3 չետվետ։

Բայց ինչպէս անել։ Սեփական գործիքներ չունենալը վատ բան է, որովհետեւ մարդը ստիպւած է ծախել իւր բանւորական ոյժը, իրեն անձը, ուրիշն հարստացնելու համար. ունենալն էլ վատ է, որովհետեւ ահագին կարիք և նոյն իսկ սովէ է առաջանում։ Ուրեմն ինչ անել, ինչ ելք գտնել։

Ելք կայ և այն էլ շատ հիանալի։ Ինչո՞ւ շշարունակել սրանից յետոյ էլ այնպէս, ինչպէս որ է այժմաւ Մեր գործարաններում և ընդարձակ կալւածներում, որտեղ բանւորները աշխատում են միասին, թող սրանից յետոյ էլ միասին շարունակեն աշխատել. միայն թող չբաժանեն իրար մէջ ոչ գործիքները և ոչ էլ հողերը. բոլոր գործարանները թող պատկանեն բանւորներին՝ և ոչ թէ նրանցից մէկին, կամ միւսին։ Թող լոլոր գործարանները եւ ամբողջ նողը պատկանի լոլոր բանւորներին, ամբողջ զիւղացիութեանը. Թող դա լինի նրանց ընդհանուր \*) սեփականութիւնը։

Թող նրանք բոլորը միասին աշխատեն՝ բայց ոչ գործարանատիրոջ, այլ իրանց համար։ Այն ժամանակ նրանք կարտադրեն այժմւանից ոչ թէ քիչ, այլ աւելի շատ ապրանք։ Ամեն մէկը կդիմենայ, որ աշխատում է ոչ թէ գործարանատիրոջ այլ իւր բոլոր ընկերների համար, որոնք փոխադարձաբար աշխատում են և իրահամար։ Այն ժամանակ բանւորը կհասկանայ, որ, եթէ ինը գործարանում աշխատելու լինի աւելի, բան այդ պէտք է, յաւելեալ աշխատանքը, յաւելեալ արժէքը կգործադրուի բոլորի ոչ թէ մի խումբ մարդկանց հարստանալու համար, որով կբարւոքւի ընդհանուրի վիճակը։

Այսպէս ուրեմն՝ բանւորները այս գրութիւնից

\*) Այսինքն՝ պետական։

կազմատեսն միմիայն այն ժամանակ, երբ հողն ու գործարանները ընդհանուրի սեփականութիւն կդառնան:

Բ.

Իսկ այժմ ինքներս մեզ մի հարց տանք,—արդեօք կյաջողւի այդ: Կարելի՞ է յուսալ, որ հողերի և արդիւնաբերութեան գործիքների համայնացումը կիրականանայ: Կարելի բան է արդեօք, որ ամեն մի մարդ իւր գլխի տէրը լինի: Հարուստները և աղքատները միշտ եղել են, շարունակ և ամեն տեղ տպրել են ահագին թւով ճնշւած մարդիկ ու մի խումբ կեղերիչներ: Միշտ եղել են մարդիկ, որոնք այդ տեսակ կարդերը անիրաւացի են համարել, և սակայն դրան ոչինչ չի օգնել՝ աղքատները շարունակ թշւառ են ապրել, իսկ հարուստները ճոխ կեանք անցկացրել:

Իսկ այսօր միթէ աղքատների թիւը աւելի ու աւելի չի շատանում, միթէ սարսափելի կարերը չի շրջապատում բոլոր երկրների բանւորներին:

Այդ ամենը զուտ ճշմարտութիւն է, բայց և այնպէս մենք չենք յուսահատուում. ընդհակառակ՝ սրանից մենք պարզ կերպով տեսնում ենք, որ այնուամենայնիւ ցանկալի ապադան կհամնի: Ահա թէ ինչումն է բանը:

Սեփականութիւնից զուրկ չունեորների թիւը շարունակ աւելանում է և պէտքէ էլ աւելանայ: Ներկայ կարդերում սրա դէմ ոչինչ չես անի: Արհեստաւորը իւր ապրանքը շուկայ տանելով ուզում է, որքան կարելի է, նրա փոխարէն շատ փող ստանալ, և սրանում ոչ մի զարմանալու բան չկայ: Նրա վրայ աշխատել է, քրքան կարողացել է: Բայց ինչ օգուտ նրան

իւր աշխատանքից: Գործարանատէրը, պատրաստելով նոյն ապրանքը իւր գործարանում, նրա արտադրութեան վրայ աւելի քիչ աշխատանք է գործադրում: Ենթադրենք, որ փականագործը կողպէրի վրայ երեք ժամ է չարչարւել. իսկ գործարանում նոյն այդ կողպէրը կպատրաստեն մի ժամում, գուցէ և աւելի շուտ: Փականագործը իւր կողպէրի համար կուղենալ ՅՈ կոպէկ վերցնել (եթէ մի ժամւայ աշխատանքը արժէ 10 կոպէկ), իսկ գործարանատէրը կծախէ այն 10 կոպ: Պարզ է այդ գէպրում, որ ոչ ոք փականագործից ապրանք չի գնի, և փականագործը, չկարողանալով իւր ապրանքը արտահանել, ստիպւած՝ կծախէ իւր մեքենան և իւր ոյժն էլ կգնայ ու կծախէ գործարանատիրոջ:

Ինչ որ ասացինք փականագործի մասին կվերաբերի և բոլոր արհեստաւորներին. նրանք չպիտի կարողանան մրցել գործարանների ու մեքենաների հետ և վաղ թէ ուշ պէտք է վարձու բանւոր գառնան: Եւ այսպէս՝ մարդիկ աւելի և աւելի զրկում են իրանց բնական աղատութիւնից և ակամայ ծախում իրանց բանւորական ոյժը: Յամենայն դէպս, եթէ բանւորները ունենային մի կայուն աշխատավարձ, այն ժամանակ գուցէ նրանք կարողանային մի կերպ ապրել այս աշխարհում: Այսօր ընդհակառակն է լինում բանւորների վարձը շարունակ ընկնում է, իսկ գործարանատիրոջ գրպանը շարունակ հաստանում:

Աշխատանք այդ աւելի պարզօրէն բացատրել: Յիշենք, թէ որտեղից է ստացւում գործարանատիրոջ օգուտը՝ բանւորը իւր յաւելեալ աշխատանքը տալիս է նրան, որովհետեւ օրւայ մի մասը բանւորը իւր համար է աշխատում, իսկ միւս մասը գործարանատիրոջ

համար։ Եթէ, օրինակ գործարանատէրը պահում է 20 բանտոր, նրանցից իւրաքանչիւրին օրական տալով 90 կոպ., նա այդքան նրա համար է վճարում, որ բանտորը կարողանայ իւր գոյութիւնը պահել (կերակուր, հագուստ և բնակարան ձեռք բերել)։ Բանտորները 6 ժ. աշխատանքից յետոյ ստանում են 90 կոպ., իսկ օրւայ մնացեալ մասը բանում են ձրի և այդպիսով գործարանատիրոջը տալիս են օրւայ մի նոր արժէք՝ 90 կոպ. (Եթէ ընդունենք, որ բանտորը օրեկան 12 ժամ է աշխատում)։ Եւ եթէ նրանց տեղը 20 հոգի է և եթէ ընդունենք, որ նրանք տարւայ մէջ 333 օր են աշխատում, այն ժամանակ կտեսնենք, որ նրանք իրանց տիրոջ 6000 լուր, օգուտ են տալիս ( $20 \times 90 \times 333$ )։ Ակնյայտնի է, որ որքան բանտորները աւելի երկար են աշխատում, այնքան էլ գործարանատիրոջ օգուտն է բարձրանում՝ այնպէս որ, եթէ ամեն օր 6 ժամւայ փոխարէն բանտորները նրա համար 8 ժամ աշխատէին, գործարանատիրոջ օգուտը կլինէր ոչ թէ 6000 րուր., այլ 7200 րուր.։

Եւ այդ այդպէս է, — բանտորները ստիպւած են իրանց բանտորական օրւայ մեծ մասը գործարանատիրոջ տալ։

Ինչպէս թէ այդպէս է։ Հենց այնպէս ինչու համար մեր վերցրած օրինակում բանտորը օրական 90 կոպ. է ստանում։ Որովհետեւ նրան իւր գոյութիւնը պահպանելու համար այդքան փող է հարկաւոր։ Այդ վարձով 6 ժամ աշխատելուց յետոյ, բանտորը օրւայ միւս մասը (այսինքն՝ 6 ժամ) ձրի է բանում։

Եթէ լինէր այնպէս, որ բանտորին իւր ապրուստը հայթայթելու համար, փոխանակ 6-ի, պէտք լինէր 4

ժամւայ աշխատանք, այն ժամանակ աշխատավարձը ոչ թէ 90, այլ միայն 60 կոպ. կլինէր։ Այդ գէպըում աշխատաւորը իւր համար 4 ժամ կաշխատէր, իսկ գործարանատիրոջ համար 8 ժամ, տալով նրան իւր ամբողջ յաւելեալ աշխատանքը, ամբողջ յաւելեալ արժէքը։

Իրական կեանքում այդպէս է տեղի ունենում։ Բայց միաժամանակ, երբ ամեն տեղ մուտք են գործում մերենաները, որի շնորհիւ ապրանքները աւելի շուտով և հեշտութեամբ են արտադրվում, այն առարկաները, որի մեծ կարիքն է զգում բանտորը, աւելի պակաս ու պակաս աշխատանք են պահանջում իւր պատրաստութեամն համար։ Առաջները ըլուզը 2—3 օրւայ աշխատանք արժէր, իսկ այժմ միայն մի օրւայ, նոյն իսկ աւելի քիչ։ առաջ սիւրտուկը, օրինակ՝ 10 օրւայ աշխատանք արժէր, այսօր չարժէ և 3 օրւայ։

Հետեաբար, բանտորը այսօր իւր համար երկար չի աշխատում, ինչպէս այդ առաջ էր։ Նախկին ժամանակները նա իւր համար փոխանակ 4-ի 6 ժամ էր աշխատում։ Բայց դրանից նրան ոչ մի օգուտ չկար։ Առաջ նա իւրաքանչիւր օրւայ 12 ժամւայ աշխատանքի 6 ժամը իւր համար էր բանում, իսկ մնացեալ 6 ժամը տալիս էր գործարանատիրոջ։ այժմ նրան բաւական է 4 ժ.։ Հետեաբար, գործարանատիրոջը մնում է 8 ժամ։ Բանտորը դարձեալ առաջւայ նման տնօրում է, մինչդեռ օգուտ ըազողը միայն գործարանատէրն է։ Բանտորը իւր համար առաջ աշխատում էր 6 ժ.։ իսկ մնացեալ 6 ժ.։ նա գործածում էր յաւելեալ արժէր ստեղծելու համար։ այդ յաւելեալ արժէքի չափը (այսինքն՝ վճարւած և չվարձարտւած աշխատանքների յարաբերութիւնը) հաւասար էր 1 կամ 100%։ այսօր բանտորի

Համար անհրաժեշտ աշխատանքը շարունակում է 4 ժամ, յաւելեալ արժեքը ստացվում է 8 ժ. աշխատանքից յետոյ, և նրա չափը կլինի 2 կամ 200<sup>0</sup>/օ։ Այժմ ամեն տեղ արդիւնաբերութեան իւրաքանչիւր ճիւզում մեքենաներ են կանգնեցնում, աշխատանքը նրանց շնորհիւ աւելի արագ է առաջ գնում։ Դրա համար էլ հէնց բանւորի՝ իւր գոյութիւնը պահպանելու համար անհրաժեշտ ժամանակը շարունակ կլրածատում է իսկ գործարանատիրոջ բաժնի ժամանակը բարձրանում։ Նոյնպէս բարձրանում է և յաւելեալ արժեքը չափը։

Հիմա արդէն մենք տեսնում ենք, թէ բանւորները ինչից ստիպւած աղքատանում են, իսկ գործարանատէրերը հարստանում։

Դա ուրախալի երկոյթ չէ, կասէք դուք Եթէ այդպէս է, կնշանակէ՛ մենք ինչպէս յուսանք, որ մեր դրութիւնը կբարելաւի։

Ժողովրդական առածը ասում է՝ «Զկայ չարիք առանց բարիքի»։ Այսպէս և յաւելեալ արժեքի չափի բարձրանալու մէջ կայ և մի ուրախալի երկոյթ։ Ամենաառաջ շատ լաւ է, որ բանւորը հետզետէ քիչ աշխատանք թափելով կարողանում է իրան պահել։ Այժմ, երբ համարեա թէ ամբողջ աշխատանքը տըրում է խօզէինին, ըանուրը սրանից քիչ է շահում, բայց ժամանակին այդ անհրաժեշտ աշխատանքի նւազումը նրա համար շատ կարեոր կլինի։

Բացի այդ, ես այստեղ պիտի յիշեմ այն, որի մասին մինչև հիմա լուել եմ ինչպէս էք դուք կարծում արդեօք բոլոր ֆաբրիկանտները ուրիշի աշխատանքնվ են հարստանում։ Ոչ բոլորը, ամենքը չեն կարող հարստանալ, նրանցից իւրաքանչիւրը աշխատում է

միւսին քայքայել։ Մէկը աշխատում է ծախելու համար որքան կարելի է շատ ապրանք պատրաստել, օրինակ՝ չիթ, միւսը նոյն ապրանքից աւելի շատ, երբորդը երկսից էլ աւելի, իսկ նրանցից ամեն մէկը, որքան կարելի է, ապրանքը պէտք է էժան վաճառէ, եթէ ուզում է, որ նա չմնայ ու չփշանայ. վերջապէս, եթէ չիթը մեծ քանակութեամբ վաճառանոց արտահանւի, որ նոյն իսկ գրան գնողները չգտնւեն, վաճառականին կսպառնայ մեանկութիւնը։ Միմիայն խոշոր հարուստները կարող են աւելի երկար սպասել և դարձեալ ապրանք արտադրել, իսկ մանր հարուստները ամբողջապէս սնանկանում են և իրանց հետ էլ մեանկացնում հազարաւոր բանւորներին, որոնք նրանց մօտ էին աշխատում, և այդ աշխատաւորներին թողնում առանց մի կտոր չոր հացի։ Եւ այդ բանը իւրաքանչիւր 8, 10 տարին մի անդամ կրկնում է։ Իւրաքանչիւր 8, 10 տարին մի անդամ կորչում են բազմաթիւ մանր գործարանատէրեր, փողոց են շպրտում բազմաթիւ բանւորներ, իսկ հարստանում են միմիայն մի բանի խոշոր Փաբրիկանտներ։

Եւ սրանից ինչ է հետեւում։ Շատ բան։ Ֆաբրիկանտների և առհասարակ հարուստների թիւը շարունակ ու շարունակ փորբանում է, իսկ աղքատ բանւորների թիւը աւելի և աւելի բազմանում։ Հարստութիւնը շարունակ հաւաքւում է մի փորբիկ խումբ մարդկանց ձեռին, իսկ բազմաթիւ ժողովրդին հիւրընկալում է կարիքը։

Սշխատաւորները նկատում են, որ գործարանատէրերի թիւը պակասում է, չնայած՝ որ նրանց հարստութիւնը աւելանում է, այնպէս որ, ֆաբրիկանտների ոյժը բանի գնում նւազում է, իսկ հարստութիւնը

գիղւում։ Բանւորները գործարանում սովորում են միասին աշխատել. նրանք սեփական աշքով տեսնում են, թէ ինչպէս հասարակական աշխատանքը աւելի օգտակար է, թէ ինչպէս աշխատանքի ժամանակը խնայում է և գործւածքների տեսակը քանի դնում լաւանում։ Նրանք սեփական աշքերով տեսնում են, թէ ինչպէս վատ բան է, երբ արդիւնաբերութեան բոլոր գործիքները պատկանում են մէկին՝ գործարանատիրոջ, որ ինքը ոչ թէ չի աշխատում, այլ նոյն իսկ իւր արտադրող ապրանքների մասին ոչ մի հասկացողութիւն չունի։

Բանւորները գործարաններում ընտելանում են իրար փոխադարձ օգնութեան. նրանք տեսնում են, որ բանւորը բանւորին եղբայր է, որ նորա ունին մի ընդհանուր թշնամի, որը ապրում է իրանց աշխատանքով. և նրանք հասկանում են, որ այդ թշնամուն յաղթելու համար անհրաժեշտ է միանալ և իրար օգնել։

Իհարկէ, արդէն շատ բանւորների մէջ յղացել է այն միտքը թէ ինչո՞ւ համար մենք պէտք է մէկի համար աշխատենք. չէ՞ որ մենք շատ ենք, իսկ նա մենակ. մենք մեզ համար ենք աշխատում, իսկ նա խլում է մեր աշխատանքը։ Եթէ գործարանները մերը լինէին, այն ժամանակ ամեն ինչ կիոխւէք՝ մենք այն ժամանակ չեինք աշխատի եկամուտ ձեռք բերել, այլ կջանայինք միայն մեր գոյութիւնը պահպանել։ Մենք կաշխատէինք ամենքի օգտին, իսկ նա միայն իւր համար է աշխատում, այն էլ ի վաս ուրիշների։

Ինչո՞ւ ուրեմն չհամոզել մեզ բոլորիս և ինչո՞ւ չխլել բոլոր խօզէիններից նրանց հողերն ու գործարանները։

Գ.

Բայց այդ արդարացի կլինէր։

Ոչ թէ քիթը «բոնօթաման»-ի համար է, այլ «բոնօթաման»-ը քթի։ Մարդիկ չեն ապրում նրա համար, որ որքան կարելի է շատ ապրանք արտադրեն, այլ ապրանքները պատրաստում են նրա համար, որ մարդկային կարիքներին բաւականացնեն։

Բանւորները իրանք են ստեղծում ապրանքը, նրանք էլ պէտք է օգտւեն նրանից. իսկ դրա համար նրանք պէտք է որ ունենան աշխատանքի անհրաժեշտ գործիքները, որոնք պատկանում են հիմա գործարաննատէրերին։ Եւ եթէ ձեզ կասեն թէ սեփականութիւնը սրբութիւն է և նրան ձեռք տալը անկարելի, գուք կարող էք պատասխանել այսպէս՝ մենք այլ ևս չենք կամենում հարստացնել ուրիշներին մեր սեփական աշխատանքով։

Դ.

Այժմ մնում է մի շատ կարեւոր հարց՝ ինչպէս խլել գործարաններն ու հողերը, ինչ կերպով հասնել այդ նպատակին։

Այդ արդէն ձեր գործն է։ Դրա մասին ինքներդպէտք է մտածէր։ Դեռ առաջները, երբ խօսք էր լինում հայրենիքը ստրկութիւնից աղատելու և թշնամուն քելու մասին, այն ժամանակ, բանւորներ, ձեզ էին գիմում և այն ժամանակ գուք կարողանում էիք ասել՝ «Մենք պատրաստ ենք հայրենիքը աղատել թշնամու ձեռից, բայց ինչպէս անել այդ»։

Իսկ այսօրւայ գործը ձեր սեփական, ձեր ընտանիքների ու եղբայրների գործն է. և դա պէտք է սեփական բազուկներով էլ առաջ տանէր։

Միմիայն միացած, լնդիանուր ոյժերով, բանւորները կարող են ձեռք ըերել իրենց ազատութիւնը։

### ՅԱՒԵԼԻԱՆ.

իւրաքանչիւր ապրանքի արժէքը չափում է աշխատանքի այն քանակով, որ թափում է նրա արտադրութեան վրայ (այսինքն՝ նրա պատրաստութեան վրայ): Այս բանը ընդունած է բոլոր գիտնականների կողմից: Բայց գիտութեան հետ անծանօթ մարդը կարող է այսպէս մտածել՝ եթէ իւրաքանչիւր ապրանքի արժէքը այնքան աւելի պիտի լինի, ինչքան որ աւելի աշխատանք է թափուած, նրա արտադրութեան վրայ, այն ժամանակ անհմուտ և ոչ ճարտար կօշկակարը, որ իւր կօշկիների վրայ աւելի շատ է աշխատել, քան այդ պէտք էր, նրանց փոխարէն կատանայ աւելի, քան թէ լաւ ու արագ աշխատող հմուտ վարպետը: Բայց այդ տեսակ գատողութիւնը սխալ է:

Գիտութիւնը չի խօսում ժամանակի ու աշխատանքի այն աւելորդ ծախսի մասին, որ բանորի անհմտութիւնից է առաջ գալիս: Այդ աւելորդ աշխատանքը անալէտք աշխատանք է, որ դործագրում է առանց կարիքի, միայն անհմտութեան շնորհիւ: Գիտութիւնը խօսում է այն անհրաժեշտ աշխատանքի մասին, առանց որի «եօլա գնալ» անկարելի է: Իսկ այդ անհրաժեշտ աշխատանքը ոչ ամէն ժամանակ միատեսակ է: Ամենքին յայտնի է, որ կարի մեքենայի վրայ աւելի շուազվ կարելի է կարել, քան թէ առանց մեքենայի: Երբ դեռ գոյութիւն չունէին կարի մեքե-

նաները, օրինակ՝ ասենք թէ բլուզ կարելու համար անհրաժեշտ աշխատանք հաշւում էր այն միջակ (այսինքն ոչ լաւ, ոչ էլ վատ) դերձակուհու աշխատանքը, որ ասեղով էր կար անում: Իսկ երբ կարի մեքենաները երեան եկան, մի բլուզ կարելու համար անհրաժեշտ աշխատանքը աւելի ևս քչացաւ, որովհետեւ մեքենայի վրայ այն կարելի է աւելի շուտ կարել: Այն դերձակուհին, որ մեքենայ չունի, անշուշտ, ինչպէս առաջ աւելի երկար կաշխատի մի բլուզի վրայ: Բայց հիմայ նրա աշխատանքի մի որոշ մասը անհրաժեշտ չի համարուի: Դիցուք, նա մի բլուզի վրայ չարշարում է 6 ժամամուտ: Այն ինչ մեքենայի վրայ այն կարելի է կարել 2 ժամում: Այդ գէպքում, մեր գերձակուհու 6 ժամը պէտք է հաւասարուի անհրաժեշտ աշխատանքի 2 ժամերին: Ահա թէ ինչու մեքենաների ներմուծումը քայլքայում է արհեստաորներին, ձեռքի գործիքներով աշխատողներին:

Բայց գրանով գեռ բանը չի վերջանում: Որպէսզի իմ աշխատանքը լինի անհրաժեշտ աշխատանք, պէտք է, որ իմ արտադրած բերքերը հասարակութեան համար պէտքական լինին, որպէսզի՝ ինչպէս գիտնականներն են ասում, նրանց պահանջը լինի: Վերցնենք գոնէ սստայնանկի գործը: Կտաւը և ամեն մի գործւածք, իհարկէ, պէտք է մարդուս. դա մի այն տեսակ ապրանք է, առանց որի միայն վայրենիները կարող են ապրել: Դրա համար ուրեմն կտաւի կարիք կայ. ջուհակի աշխատանքը անհրաժեշտ աշխատանք է: Բայց և այսուեղ նոյնպէս բանը նրանումն է, արդեօք ջուհակը մեքենայի վրայ է աշխատում, թէ «դաղդահ»-ի: Այսօք ջուհակի անհրաժեշտ աշխատանքը այն է հաշւում, որ անհրաժեշտ է

մեքենայի վրայ գործելու համար։ Այն աւելորդ աշխատանքը, որ պէտք է թափել «գաղղահ»-ի վրայ, անհրաժեշտ չի համարւում։ Հենց դրա համար էլ միշտ տնայնագործ ջուհակները այսօր այնպէս աղքատութեան մէջ են ապրում։

Բայց դիցուք թէ՝ պէտք է 10 հազար հատ կտաւ. իսկ պատրաստել են 20 հազար։ Դուրս է գալիս, որ երկու անդամ աւելի կտաւ է պատրաստած, քան թէ պահանջվում է. ուրեմն՝ նրա արտադրութեան համար էլ պէտքից երկու անդամ աւելի աշխատանք է թափւած։ Աւելորդ աշխատանքը, անհրաժեշտ աշխատանք չէ։ Եթէ բոլոր գործւած կտորների կէսը առանց կարիքի է պատրաստած, այն ժամանակ և այդ կէսի վրայ գործ դրւած աշխատանքը աւելորդ է և երբէք անհրաժեշտ չէ։ Եթէ կտաւ պատրաստող մարդիկ (իրանք ջուհակները կամ նրանց տէրերը) ամբողջ կտաւը մի անդամից ծախեն, այդ կտաւի արժէքը երկու անդամ պակաս կլինի, քան թէ այն կլինէր իսկապէս նրանցից ամեն մէկը վնաս կլրէր. նրանցից ամեն մէկը կիմանար, որ իւր գործադրած ժամանակի կէսը իզուր է վատնել, որ նրա աշխատանքը կիսով չափ անհրաժեշտ աշխատանք կլինի. իսկ եթէ կտաւ պատրաստող մարդկանց կէսը խորամանկութեամբ այդ կտաւը աւելի շուտ վաճառատուն տանէ, քան թէ այդ մարդկանց միւս կէսը, այն ժամանակ երեխ, նրանց կյաջողութիւն արտադրութեան վրայ թափած աշխատանքի քանակութեան համեմատ ծախել այն։ Բայց այն ժամանակ կտաւ «արտադրողների» միւս կէսը իսկի գնողներ չի ունենայ նրանց աշխատանքը աւելորդ դուրս կդայ ուստի և նրանց կտաւի արժէքը կհաւասարւի զէրօի, որովհետեւ այդ կտաւի

արտադրութեան վրայ անհրաժեշտ աշխատանք գործ դրւած չէ։ Բայց և նրանց կփրկի նրանց ապրանքի էժանութիւնը եւ ահա թէ ինչ կերպ։

Տեսնելով, որ նրանց կտաւի կարիքը չի զգացւում, նրանք, ինչպէս ասում են, զօռով պիտի կապեն այդ գնողների վզին, աւելի և աւելի նրա գինը պիտի փոքրացնեն։

Այդ դէպքում շատ մարդիկ, որոնք աղքատութիւնից ստիպւած չեն կարողացել կտաւ գնել երբ նա ծախւում էր իւր իսկական գնով, այժմ կգնեն կէս գնով։ Բայց այդ՝ հարուստներից մի քանիսը կցանկանային գնել կտաւը պահեստի համար էլ, դարձեալ այն պատճառով, որ էժանութիւնը նրանց կգայթակղեցնի։ Այս բանի շնորհիւ՝ մեր ուշացած կտաւ վաճառողները ոչ առանց վնասի յետ կդարձնեն իրանց «արտադրութեան վրայ ծախսածը» և յամենայն գէպս գործը առանց մեծ վնասի չի վերջանայ։

Բայց ով գլուխ ունի վնաս կրելու համար ձրի աշխատել։ Տեսնելով, որ կտաւի կարիքը ընկել է, նրա արտադրութեամբ պարապող մարդիկ կմկնեն աւելի քիչ պատրաստել։ Այս ժամանակ նրա գինը կբարձրանայ։ Եթէ այս անդամ պատրաստեն ճիշտ այնքան կտաւ, ինչքան որ պահանջ կայ, նրա արտադրութեան վրայ թափւած ամբողջ աշխատանքը կլինի անհրաժեշտ աշխատանք. իսկ եթէ պահանջածից պակաս կտաւ պատրաստւի, նրա գինը աւելի կբարձրանայ, այնպէս որ արտադրողները կտանան աւելի, քան այդ պէտք էր։ Այն ժամանակ վնասի փոխարէն նրանք ահագին «աւել թիքայ» կտանան։ Բայց «աւել թիքայ»-ների սիրահարներ շատ կան։ Դուրս կդան նոր արտադրողներ,

Նրանք էլ նոյնպէս իրենց կտաւը շուկայ կարտահանեն։ Այն ժամանակ նրա դինը նորից կնկնի, և այդպէս շարունակ։

Եւ ահա կտաւի գների հենց այդ տատանումները, գործը հասցնում են այնտեղ, որ եթէ մենք վերցնենք ոչ թէ մի տարի և մի դէպք, այլ շատ տարիներ և շատ դէպքեր, երբ կտաւը շուկայում վաճառում է, այն ժամանակ կտեսնենք, որ նրա արժեքը շափում է աշխատանքի այն քանակութեամբ, որը անհրաժեշտ է նրա արտադրութեան համար։

Նոյնը կարելի է տաել և իւրաքանչիւր ապրանքի մասին։

Միայն պէտք է իմանալ, որ մի որ և իցէ ապրանքի արտադրութեան համար անհրաժեշտ աշխատանքը բանակը ասելով չպէտք է հասկանալ մի որ և իցէ արհեստի պատկանող բանորի աշխատանքը։ Այսպէս օրինակ, կողպէրի մէջ ոչ թէ միայն փականագործի աշխատանքն է պարունակում այլ և երկաթի հանքերը դտնող հանքահանի, ձուլող, հալող, շերտաւորեալ երկաթ պատրաստող, տեղափոխող և այլն բանորների աշխատանքները։ Այս բոլոր բանուորները եթէ ոչ այդ իսկ կողպէրի, այլ նրա համար անհրաժեշտ նիւթերի պատրաստութեան են նպաստել։ Եւ դրա համար էլ կողպէրի արժեքը չափելիս այդ բոլոր բանորների աշխատանքը պէտք է հաշւի առնելի։

Հենց այդպէս՝ երբ մենք մերենայի վրայ աշխատող գերձակուհու աշխատանքը համեմատում էինք մերենայ չունեցող գերձակուհու աշխատանքի հետ, լիակատարութեան համար սա էլ պէտք է ի նկատի ունենայինք։

Ինքը մերենան բանւորի աշխատանքով է պատրաստւած։ Դրա համար էլ նա նոյնպէս արժեքը ունի։ Այդ արժեքը պակասում է մերենայի գործածութեամբ։ Գործածուած մերենան միշտ էժան էնորից։ Եւ դա պարզ է, քանի որ մերենայով կարւած ըլուզը իւր մէջ պարունակում է ի միջի այլոց, մերենայ շինող բանւորների աշխատանքը։ Ուրեմն, եթէ ճիշտ դատելու լինենք, առանց մերենայի աշխատող գերձակուհու Յ ժամեայ աշխատանքը, ինչպէս մենք ասացինք, չի հաւասարէ անհրաժեշտ աշխատանքի 2 ժամերին։ Առանց մերենայի աշխատելով, նա մերենայի գործածութիւնից կորած արժեքը չի փոխադրում կարած ըլուզի վրայ։ Այդ պատճառով թէև նա երեք անգամ ծանր է կարում, քան թէ մերենայի վրայ, բայց նրա Յ ժամեայ աշխատանքը պիտի հաւասար լինի ոչ թէ երկու, այլ ասենք  $2^{1/4}$  կամ  $2^{1/2}$  Ժ. անհրաժեշտ աշխատանքից ինքնըստինքեան պարզ է, որ այդ չնչին տարբերութիւնը չի փոխի գէպի լաւը նրա այն կորստաբեր գրութիւնը, որ ստեղծւել է մերենաների ներմուծութիւնից։

**ԱՐԻՊԱԿՆԵՐ**

Երես.	տող.	տպած է.	պէտք է լինի.
6	11	վերեկց	աանը
7	11	"	աբասպըութեան
7	6	ներեկեց	գէպըուում
9	1	"	յարելւած
9	8	"	վըսյ
11	4	վերեկց	կարող
32	4	ներեկեց	գործում



